# ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆ ՔԱՂԴԱՍԱԳԻՐՔ

355.51
Կ-35

ՄԱՍ II

ԵՐԵՎԱՆ 1931

1 MAR 2010

ԽՍՀՄ ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք ՀԽՍՀ

355.51
Կ-35

# ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆ ՔԱՂԴԱՍԱԳԻՐՔ

ՄԱՍ II

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ. ՀՐ. ԴԻՎ. ՔԱՂԲԱԺՆԻ

1931 ՅԵՐԵՎԱՆ

12572-52

20 MAY 2013

42.340

# КРАСНОАРМЕЙСКИЙ ПОЛИТ-УЧЕБНИК

Часть II

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ

Պատվեր 6315. Տիրաժ 3000. Գլավլիտ 9293 (բ)



# II. ԽՍՀՄ-Ի ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

## ԻՆՉՊԵՍ Է ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ

Մեր յերկիրը գտնվում է թշնամական կապիտալիստական շրջապատման մեջ: *Դասակարգային թշնամին ուժգնորեն նոր պատերազմ է պատրաստում ԽՍՀՄ դեմ: Յեվ հետևաբար մենք միշտ պետք է զգոն լինենք, մենք պետք է ունենանք ամրապինդ, մարտունակ Կարմիր բանակ, վոր հարկավոր դեպքում կարողանա պաշտպանել մեր յերկիրը հարձակումից, վոր կարողանա ջախջախել մեր թշնամիներին:*

Մենք մեր բանակը կառուցում ենք լիովին ու խստորեն այն պահանջների համեմատ, վորոնք առաջադրում է նրան ժամանակակից պատերազմի բնույթը, վորոնք առաջադրում են մեր յերկրի պաշտպանության խնդիրները, համաշխարհային պրոլետարական հեղափոխության շահերը: *Մենք հայթայթում ենք մեր բանակին ժամանակակից ռազմական տեխնիկա, մենք մեր զինված ուժերը կառուցում ենք այնպես, վոր պատերազմի ժամանակ ունենանք ամուր մարտունակ մասսայական բանակ, տեխնիկապես լավ զինված: Բանակի տեխնիկայով հագեցումը, տեխնիկային տիրապետումը հանդիսանում են այժմ վճռական խնդիրներ Կարմիր բանակի շինարարության և նրա մարտունակությունը ամրացնելու նկատմամբ:*

Խորհրդային իշխանությունը ձգտում է, վորքան հնարավոր է, չխախտել յերկրի պաշտպանության շահերը, նվազեցնել բնակչության դժվարությունները, վորոնք կապված են զինվորական ծառայության հետ ու ռազմական ծախսերի հետ, պակասեցնել Կարմիր բանակում ծառայության ժամկետը և Կարմիր բանակի թիվը:

Մեր զինված ուժերի շինարարության գործում, մեր յերկրի մարտական հզորության ստեղծելու գործում մենք հենվում ենք մեր աշխատավոր ամենալայն մասսաների վրա: Վորքան բանակը սերտ կապված լինի բանվոր դասակարգի հետ, վորքան մեծ լինի ռազմապես սովորած աշխատավորների թիվը, այնքան Կարմիր բանակն ուժեղ կլինի, այնքան ավելի հուժկու կլինի մեր յերկիրը:

Կոմունիստական կուսակցության ծրագիրը հետևյալ ցուցումն է տալիս՝ թե ինչպես պետք է կառուցենք մեր բանակը.

> «Ի ՀԱԿԱԿՇԻՌ ՀԻՆ ԲԱՆԱԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆ՝ ԻՍԿԱԿԱՆ ԶՈՐԱՆՈՑԱՅԻՆ ՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԿԱՐՃԱՏԵՎ ԺԱՄԱՆԱԿ, ԶՈՐԱՆՈՑԻ ՄՈՏԵՑՈՒՄԸ ՌԱԶՄԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՏԻՊԻՆ, ՀՆԱՐԱՎՈՐ ՍԵՐՏ ԿԱՊ ՌԱԶՄԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ ՅԵՎ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ, ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ...»

Յեվ այդ ուղղությամբ է ընթանում Կարմիր բանակի շինարարությունը:

Տերիտորիալ-միլիցիոն սիստեմը—Կարմիր բանակի շինարարության հիմքն է: Ամեն տարի մեր Միության մեջ զորակոչի յենթարկվում ավելի քան 1½ միլիոն մարդ: Յեթե նկատի ունենանք, վոր նրանցից մի մասը իրենց առողջությամբ կամ ընտանեկան պարտականություններով պետք է ազատվի, այնուամենայնիվ դարձյալ մնում է մինչև մեկ միլիոն կամ ավելի մարդ, վոր պիտանի յեն զինվորական ծառայության համար: Յեթե մենք նրանց կանչեյինք և ռազմական գործը սովորեցնեյինք բանակի կադրային զորամասերում յերկու տարվա ընթացքում, այն ժամանակ մենք պետք է մի հսկայական բանակ ունենայինք, պետք է այդ բանակի վրա ծախսեյինք խիստ շատ փող: Այնինչ մենք շատ ենք կրճատել մեր կադրային բանակը: Կադրային բանակ կարող ենք ընդունել մենք ամեն տարի սահմանափակ թվով մարդիկ: Յեվ ահա ազատ մնացած մասը իսկական զինվորական ծառայությունը



կրում է յերկրային զորամասերի փոփոխիկ կազմում, ռազմար-
տաղրական ծառայության մեջ կամ արտադրական կարգով:

Յերկրային զորամասերը հնարավորություն են տալիս ռազմական գործը սովորեցնել խոշոր թվով աշխատավորների առանց նրանց յերկար ժամանակով կտրելու իրենց ընտանիքից և տնտեսական շինարարությունից: Յեվ պետության համար շատ ավելի աժան է նստում աշխատավորների ուսուցումը տերրիտորիալ զորամասերում, քան թե Կարմիր բանակի կադրային զորամասերում:

Այսպես՝ մենք ունենք զինված ուժերի կազմակերպման և ուսուցման խառը սիստեմ, սակայն Կարմիր բանակի խոշոր մասն արդեն անցել է տերրիտորիալ սիստեմին:

Հարց է ծագում՝ ինչո՞ւ մենք ամբողջովին չենք անցնում բացառապես յերկրային զորամասերում ուսուցման սիստեմին:

Ինչո՞ւ մենք դեռևս պահում ենք Կարմիր բանակի կադրային զորամասեր, վորտեղ ամեն տարի զորակոչի յենք յենթարկում աշխատավորների վորոշ քանակ:

Ամեն կողմից մենք շրջապատված ենք արյունարբու թշնամիներով, վորոնք արթուն կերպով հետևում են թե ինչ է կատարվում մեզանում: Մի րոպե պատկերացնենք, վոր մենք չունենք կադրային, այսինքն՝ Կարմիր բանակի մշտական զորամասեր, այլ ունենք միայն յերկրային զորամասեր, այսինքն՝ այնպիսի զորամասեր, վորոնք ժամանակ առ ժամանակ կրկնողական պարապմունքների յեն հավաքվում: Հանկարծ հարձակվեցին մեր վրա: Մենք այն ժամանակ պետք է հավաքեյինք յերկրային զորամասերի կարմիր բանակայիններին և տեղափոխեյինք նրանց ճակատ: Բայց, իհարկե, հասկանալի յե թշնամիները չեյին սպասի, վոր մեր զորամասերը ի մի հավաքվեն: Նրանք իսկույն կգրավեյին մի շարք շրջաններ, նաև մեր յերկրային զորամասերին, վորոնք ժամանակ չեյին ունենա միանգամից բացազատվել ու մարտի պատրաստվել և կջախջախվեյին մինչև վերջին մարդը:

Իսկ կադրային զորամասերը, միշտ զենքի տակ գտնվելով կարող են արագորեն և հեշտությամբ ուղարկվել այնտեղ, վորտեղ հարկավոր է: Հենց վոր թշնամիները հարձակվեն, կադրային դաշտային զորամասերը կարող են յետ մղել նրանց առաջին հարձակումը, կարող են թշնամուն կանգնեցնել, չթողնել առաջ գալ և այդպիսով ապահովել զորահավաքի հաջող անցկացումը: Այսպես ուրեմն, կադրային զորամասերն են, վոր հիմք են հանդիսանում

անհրաժեշտության դեպքում ծավալելու աշխատավորների մասսայական բազմամիլիոն բանակը:

Բացի դրանից, կան ամբողջ մի շարք մասնագիտական զորամասեր, որտեղ կարմիր բանակայինների ուսուցումը յերկար ժամանակ է պահանջում: Շատ դժվար է կարճ ժամանակում կարմիր բանակայինին սովորեցնել այդ մասնագիտությունը: Այդ հատուկ նշանակություն է ստանում այժմ, յերբ Կարմիր բանակի տեխնիկական հագեցումը պահանջում է, որ կարմիր բանակայինը լավ պատրաստված լինի, լավ իմանա իր ռազմական մասնագիտությունների գործը զանազան տեխնիկական միջոցների վերաբերյալ:

Եվ վերջապես, կադրային զորամասերի կարմիր բանակայինները, որպես յերկար ժամանակ ծառայածներ Կարմիր բանակում, ստանում են շատ ավելի ռազմական գիտելիքներ, պրակտիկա ու փորձ և կարող են հեշտությամբ կրտսեր հրամանատարների պաշտոններ ունենալ Կարմիր բանակում: Կադրային զորամասերն են, որ պատրաստում են կրտսեր հրամանատարներ:

Այժմ լայն ծավալված արդյունաբերության ինդուստրացումը, կոլտնտեսական շինարարությունը դեռ ե՛լ ավելի ամուր ու հաստատուն բազա յեն ստեղծում յերկրային զորամասերի հետագա զարգացման ու ամրապնդման համար: Խորհտնտեսություններն ու կոլտնտեսությունները, մեքենա-տրակտորային կայանները հսկայական հնարավորություններ են ստեղծում գյուղի աշխատավոր մասսաների կազմակերպման ու ռազմական պատրաստության բարձրացման համար:

Մենք արդեն խոսեցինք այն մասին, թե ինչպիսի խոշոր դեր են կատարում կոլտնտեսություններն ու խորհտնտեսությունները մեր յերկրի ու Կարմիր բանակի պաշտպանունակության ամրացման գործում: Խորհտնտեսություններն ու կոլտնտեսություններն են, որ ստեղծում են պրոլետարական հեղափոխության համար քաղաքականապես զարգացած, գիտակից մարտիկների կադրեր: Լայնորեն կիրառելով տեխնիկան տնտեսության մեջ, նրանք պայմաններ են ստեղծում մասնագետներ պատրաստելու համար, որոնք անհրաժեշտ են և՛ ռազմական գործում: Խորհտնտեսություններում, կոլտնտեսություններում, մեքենա-տրակտորային կայաններում կարելի յե կազմակերպչորեն դնել և՛ ռազմական ուսուցումը, դաստիարակությունը՝ միջհավաքային աշխատանքի ժամանակ, կարելի յե և՛ պայմաններ ստեղծել յերկրային զորամասերի ամրացման համար՝ հայթայթելով այդ մասերին անհրաժեշտ գույքն ու տեխնիկան:

Այդ բոլորը մեծագույն չափով ամրացնում են մեր զինված ուժերի յերկրային զորամասերին, մեր մարտունակությունը:

Այսպես՝ սովորեցնելով ռազմական գործը մեր յերկրի աշխատավորներին, կոփելով նրանցից գիտակից մարտիկներ պրոլետարական դիկտատուրայի համար և տեխնիկապես հագեցնելով Կարմիր բանակը ժամանակակից ռազմական տեխնիկայով, մենք զորացնում ենք ԽՍՀՄ մարտական հզորությունը:

[redacted]

Ինչն է կազմում ԽՍՀՄ զինված ուժերի շինարարության հիմքը:

Ինչո՞վ է ձեռնտու յերկրային սիստեմը:

## ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԱԶԳԱՅԻՆ ԶՈՐԱՄԱՍԵՐԸ

Բուրժուական բանակներում ազգային փոքրամասնությունները խստահարվում են, չեն ոգտվում տիրող ազգությունների իրավունքներով: Ցարական բանակում շատ ազգությունների նույնիսկ բոլորովին բանակ չեյին թողնում:

Իսկ Կարմիր բանակում կան մի շարք ազգային զորամասեր իրենց հրամանատարական կազմով: Այդ զորամասերում ուսուցումն ու դաստիարակությունը տարվում է ազգային լեզվով: Այդպիսի ազգային զորամասեր կան մինչև դիվիզիաների կազմով Ուկրաինայում, Վրաստանում, Հայաստանում, Բելոռուսիայում: Առանձին ազգային զորամասեր ստեղծելու հետ միասին, շատ զորամասերում, որտեղ կան բավական թվով որևէ առանձին ազգության կարմիր բանակայիններ, նրանք առանձնացվում կազմում են հատուկ ստորաբաժանումներ, և նրանց հետ պարապմունքները տարվում են մայրենի լեզվով:

Խորհրդային իշխանության ճիշտ լենինյան ազգային քաղաքականությունը ուժեղացնում է մեր յերկրում բանվոր դասակարգի ու գյուղացիության աշխատավոր մասսաների մարտական դաշինքը, ամրացնում է Կարմիր բանակի մարտունակությունը: Նախկին ճնշված, հետամնաց ազգությունների իրենց մայրենի լեզվով ուսուցումն ու դաստիարակությունը, նրանց ազգային

կուլտուրայի զարգացման պաշտպանությունը—ոգնում են նրանց ավելի լավ գիտակցել պրոլետարիատի դիկտատուրայի էությունը, իրենց դասակարգային շահերն ու խնդիրները: Յեվ Կարմիր բանակի շարքերում այդ ապահովում է բոլոր աշխատավորների զինված դաշինքի ամրությունը՝ բանվոր դասակարգի ղեկավարությամբ, ապահովում է ավելի լավ գիտակցումը իրենց խնդիրները Կարմիր բանակում, ապահովում է ռազմական գործի լավագույն յուրացումը և հաջող քաղաքական դաստիարակությունը:

Ազգային զորամասերը, ազգային միավորումները միևնույն խնդիրներն ունեն, ինչվոր Կարմիր բանակը ամբողջությամբ առած. այն է՝ պաշտպանել ԽՍՀՄ, պաշտպանել դասակարգային թշնամուց: Զանազան ազգությունների աշխատավորների մեջ չեն կարող լինել զանազան դասակարգային շահեր: Նրանց դասակարգային շահերը միևնույնն են:

Լենինյան պատգամը՝ ազգային լիակատար իրավահավասարության և բոլոր ազգությունների աշխատավորների դասակարգային շահերի միասնության մասին, անց է կացվում նաև Կարմիր բանակում վճռականորեն:

Ազգային զորամասեր և ազգային ստորաբաժանումներ կազմակերպելիս հաշվի յեն առնվում տվյալ ազգի առանձնահատկությունները, նրա կուլտուրական վիճակը, կենցաղի առանձնահատկությունները և այլն: Դժվար գործ է այդ, վորովհետև նա պահանջում է մի շարք ազգերի նկատմամբ, վորոնք առաջ ճնշվել են բուրժուազի կողմից, վորոնք կուլտուրապես հետամնաց են, պատրաստել տվյալ ազգության աշխատավորների շարքերից հրամանատարական և քաղաքական կազմ: Ազգային շինարարությունն անշեղորեն զարգանում է, ամրացնելով նրա մարտունակությունը վորպես պրոլետարական դիկտատուրայի գործիք:

[redacted]

Ինչո՞ւ ազգային զորամասեր են ստեղծված Կարմիր բանակում և ինչ է նրանց դերը:



# ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՎԻԶԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Հայկական Հրաձիգ դիվիզիան—մի բաղկացուցիչ մասն է, մի անքակտելի մասնիկը պրոլետարական, ինտերնացիոնալ բանվորագյուղացիական Կարմիր բանակի: Հայկական Դիվիզիան իր ռազմաքաղաքական շինարարությունը միշտ էլ անց է կացրել հաշվի առնելով վոչ միայն Խորհրդային Հայաստանի առանձնահատուկ պայմանները, այլև այն անպայմանորեն կապելով Միության զինված ուժերի շինարարության ընդհանուր խնդիրների, յերկրի պաշտպանության ամրացման և համաշխարհային պրոլետարական հեղափոխության հեռանկարների հետ:

Առաջին հրամանը, ըստ վորի հայկական զորքերը վերանմվում են Կարմիր բանակի, ստորագրված է իշխանությունը խորհուրդներին անցնելու որերին անցքերի յերեան ընկած խմբապետ Դրոյի և նրա ռազմական խորհրդատու Սիլինի ձեռքով 1920 թվի դեկտեմբերի 2-ին:

Յերկրորդը—Հայաստանի Հեղկոմի 1920 թ. դեկտեմբերի 5-ի վորոշումն է՝ Հայաստանում ռազմական գործերի ժողովրդական կոմիսարիատ կազմակերպելու մասին: Բայց Դիվիզիան իր պատմության իսկական սկիզբը համարում է 1920 թվի մայիս 1-ի անցքերը Ալեք-պոլում (Լենինականում): Բանվորության և աշխատավորության ցույցերն ու զինված ընդհարումները Դաշնակցության հետ, Դաշնակցության հենզինքի մի մասի և կապիտան Մուսայելյանի՝ իր գրահագնացքով՝ միացումն ապստամբներին:

Նույն թվի մայիսի 10-ին, կայազորի հեղափոխական զինվորների ոգնությամբ Ալեքսանդրապոլում հաստատվեց խորհրդային իշխանություն: Տասնյակ հազարավոր հեղափոխական բանվորներ, գյուղացիներ և զինվորներ այն ժամանակ առաջին անգամ զենքը ձեռներին դուրս յեկան դաշնակցական, խմբապետական-մաուզերիստական կարգերի դեմ:

Սարիղամիշի, Ղարսի, Ալեքպոլի, Ղազախի և Նոր Բայազետի քաղաքացիական կռիվների շրջանում, 1920 թվի մայիսին, 11-րդ բանակի կազմում յեղած հայերից և Ադրբեջան տարագրված հայերից Արմենկոմի (Հայաստանի կոմկուսակցության արտասահմանյան բյուրո) և 11-րդ բանակի Հեղ. Ռազմ. Խորհրդի վորոշմամբ կազմակերպվում է սկզբում յերկու գումարտակ, և ապա 3-րդ հրաձգային գունդը, վորն իր մարտական գործողություններով խոշոր դեր խաղաց Հայաստանում խորհուրդների իշ-

խանության համար մղած պայքարում, մի շարք փայլուն հաղթանակներ տանելով դաշնակների դեմ: Այստեղից են սկիզբ առնում և ամրանում Հայաստանում պրոլետարական հեղափոխության զինված բջիջները, Հայկական Դիվիզիայի պլոնները, որոնք փառքով պսակեցին մայիսյան և նոյեմբերյան մարտական օրերը: Հայկական կարմիր զորամասերը կազմակերպվեցին ռուսական յեղբայրական Կարմիր բանակի մարտական փորձի և սկզբունքների հիման վրա:

Հայաստանում խորհրդային իշխանության հաստատվելուց և ռազմական գործերի ժողովրդական կոմիսարիատ կազմակերպելուց հետո կուսակցության և խորհրդային իշխանության կողմից ձեռք են առնվում մի շարք միջոցառումներ կազմակերպչորեն ամրացնելու համար Կարմիր բանակը:

## ՀՐԱՄԱՏԱՐԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԸ

Առաջին հերթին բանակից հանվում են մոտ 500-600 մարդ— դաշնակցական բանակի հակահեղափոխական գեներալներ և սպաներ, որոնք թշնամաբար էին տրամադրված յերիտասարդ խորհրդային իշխանության դեմ: Անխնա դուրս են շպրտվում Վրանգելի և Դենիկինի ջախջախված բանակների նախկին սպաները, որոնք Կարմիր բանակի յերկաթե ճնշման տակ փախել և ապաստան էին գտել դաշնակցական բանակում:

Այդ հակահեղափոխական տարրերի վտարումը հիմնական գրավականն էր հանդիսանում կարմիր զորամասերի հաջող շինարարության:

Սպայակազմի մի մասը, գլխավորապես բանվորներից և գյուղացիներից, որը մայիսյան ապստամբության և նոյեմբերյան հեղափոխության օրերին անցավ մեր կողմը, և որը նվիրված է պրոլետարական գործին և մեզ հետ ձեռք-ձեռքի տված աշխատում է անդադար, մնաց բանակում:

Հայկական Կարմիր բանակի կազմակերպման առաջին շըրջանում հրամանատարական կազմի հարցը առանձնապես սուր էր դրված: Պահանջվում էր խորհրդային իշխանությանը նվիրված հրամանատարական կազմ:



## ՔԱՂԱՊԱՐԱՏՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Ցելնելով բանակի դաստիարակության սկզբունքների մասին կուսակցության ծրագրից, 1920 թվի դեկտեմբերի 12-ին Ռազմական Ժողովրդական Կոմիսարիատի հրամանով ստեղծվում է Քաղաքական Վարչություն և ռազմական կոմիսարների ինստիտուտը: Հայկական Կարմիր բանակի քաղաքական մարմինները ապրել են մի շարք վերակազմություններ: Կովկասյան Կարմրադրոշ բանակի Հեղ. Ռազմ. Խորհրդի հրամանով 1922 թվին Հայկական Կարմիր բանակի Քաղբաժինը վերակազմվեց Հայկական հավաքական բրիգադի Քաղբաժնի: 1922 թվի սեպտեմբերին Հայկական Հավաքական Բրիգադը Ռազմժողկոմատի կողմից վերակազմվում է սկըզբում որպես Առանձին Հայկական Հրաձիգ Դիվիզիա, իսկ հետո Հայկական Հրաձիգ Դիվիզիա:

## ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԿԱԶՄՆ ՈՒ ՔԱՆԱԿԸ

Հայկական Կարմիր բանակը հիմնականում կազմվել է դաշնակցական բանակի քայքայված զորամասերից:

Ռազմական Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի 1921 թ. ապրիլ 4-ի № 21 հրամանով մեծ հասակները արձակվեցին անժամկետ արձակուրդի:

Դասակարգայնորեն խորթ տարրերը վտարվեցին, բանակը համալրվում էր կոմունիստներով, կոմյերիտականներով և հեղափոխությանը նվիրված մարտիկներով:

1920 թվի դեկտեմբերի սկզբին Հայկական Կարմիր բանակը վերակազմվում է—3 հետևակային բրիգադների յերկգնդային կազմով, մեկ հեծյալ բրիգադ, 4 հրետախմբից—յերեք մարտկոցային կազմով, 2 առանձին գումարտակներ, 2 զրահագնացքներ («Մուսայելյան» և «Ավստամարտ»), մասնագիտական զորամասեր և այլն: Բանակը բաղկացած էր 6300 սվինից և 835 թրից:

Խորհրդային Հայաստանի Կարմիր բանակը հետագայում ամբողջ ԲԳԿԲ հետ ինչպես քանակական, նույնպես և զորական միավորների տեսակետից յենթարկվեց կրճատման: Վերանվանվելով Հայկական Հրաձիգ Դիվիզիայի, 1921 թվի մարտից նա մտնում է Բանվորա-Գյուղացիական Կարմիր բանակի ընդհանուր սիստեմի մեջ, կազմելով նրա անբաժանելի մասը:

Դեռևս ավարտած չլինելով կազմակերպչական աշխատանքները, դեռևս լրջորեն ձեռնամուխ չեղած ուսուցմանը, Հայկական Կարմիր բանակը հաշկադրված է լինում վերստին ընդհարվել սա- պարված, բայց դեռ լրիվին ու մինչև վերջ չջախջախված դաշնակցական հակահեղափոխության և խմբապետների հետ!

1921 թվի հունվարի 22-ին, Բաշ-Գյառնու շրջանում մի խումբ մաուզերիստներ տեղական դաշնակների հետ միասին զենք են բարձրացնում խորհրդային իշխանության դեմ:

Հայաստանի քաղաքացիական կռիվների պատմության մեջ 1921 թվի փետրվարի դաշնակցական հակահեղափոխական ավանտյուրայի դեմ մեր բանակի մարտական գործողությունները բացառիկ տեղ են գրավում:

Փետրվարյան ավանտյուրան կազմակերպված էր դաշնակցական հակահեղափոխության կողմից անգլո-ֆրանսիական և ամերիկյան իմպերիալիզմի թելադրանքով և աջակցությամբ:

Ոչ թե բանվորներն ու աշխատավոր գյուղացիությունը, այլ խմբապետներն ու մաուզերիստները, հոգևորականությունը, վաշխառու—դաշնակներն էին կազմակերպել ապստամբությունը հենված կուլակության վրա:

Առաջին ընդհարումը կուլակների և մաուզերիստների հետ տեղի ունեցավ Բաշ-Գյառնիում: Դաշնակցական բանդաների դեմ Հայկական Կարմիր զորամասերը առաջին լուրջ մարտերն ունեցան Երևանում և նրա շրջանում:

Դաշնակների պլանը կայանում էր նրանում, վորպեսզի Հայկական Կարմիր զորամասերին կտրեյին 11-րդ բանակից, կտրելով Երևան-Ղարախ խճուղին:

Դաշնակներն իրենց գործողությունները սկսեցին 14-ին, հարձակման անցնելով Բաշ-Գյառնուց, Եջմիածնից, Աշտարակից, Կոտայքից: Բանդաների ղեկավարներն էին խմբապետներ Մարտիրոսը, Խնկոն, Սմբատը, Արամը, Ցոլոնը և այլն: Բանդաները սնվում էին գյուղացիներից կողոպտած հացով և անասուններով:

Փետրվարի 18-ին, Երևանի բարձրունքներում տեղի ունեցած համառ ու կատաղի մարտերից հետո, Կարմիր զորամասերը ժամի 4-ին թողնում են Երևանը և նահանջում Երևանի կա-



յարանի ուղղությամբ, խնդիր ունենալով ամրանալ Ղամարլույի շրջանում:

Դաշնակները քաղաքը վերցնելով ձերբակալում են քաղաքում մնացած կոմունիստներին և բոլոր կասկածելիներին, շատերին գնդակահարում են և փորձում են շարունակել հարձակումը: Բայց իզուր: Կարմիր զորամասերը արդեն հավաքած են լինում ուժերը հակահարձակման համար: Այդ ժամանակներին է վերաբերում հատուկ ջոկատի կազմակերպումը կոմունիստներից և կոմյերիտականներից՝ ընկ. Ցանրչևսկու ղեկավարությամբ, վորը բազմաթիվ հերոսություններ կատարեց Հայաստանի քաղաքացիական կռիվներում:

Մարտի սկզբներին հակառակորդը հարձակվում է Քյուչուկ-Վեդու-Խոր-Վիրապի կողմից: Սկսվում են համառ մարտեր: Թողնելով հարյուրավոր սպանվածներ և մեծ թվով գերիներ, դաշնակները նահանջում են:

Մարտի 8-ի կռիվներում մահացու վերք է ստանում բրիգադի կոմիսար ընկ. Լիպարիտ Մխչյանը, վորի փառավոր անունով է կոչվում մեր 1-ին գունդը:

Մարտերը շարունակվում են մինչև 2-րդ վճռական և ընդհանուր հարձակմանը: Հայկական և համարային Կարմիր զորամասերի կողմից Ղամարլույի ճակատում և 11-րդ բանակի զորամասերի կողմից՝ ընկ. Աթարբեկովի գլխավորությամբ, Նոր-Բայազետի և Ելենովկայի ճակատում:

Դաշնակցական բանդաները խուճապի մատնված, Հայկական Դիվիզիայի և 11-րդ բանակի զորամասերի ուժեղին հարվածների տակ 1921 թվի ապրիլի 2-ին թողնում են Երևանը և գլուխները կորցրած փախչում են դեպի «Լեռնահայաստան», վորտեղ այն ժամանակ ապաստանում էր այսպես կոչված «գլխավոր հրամանատար» ավանտյուրիստ Նժդեհը:

Դաշնակցական բանդաների դեմ կատաղի մարտերի յերկրորդ շղթան տեղի յե ունենում Դարալագյազում:

Կարմիր զորքերի հրամանատարության 1921 թ. ապրիլ 12-ի հրամանով Հայկական բրիգադին խնդիր է դրվում—ապրիլի 14-ին հարձակման անցնել և ամբողջապես ու լրիվին լիկվիդացիայի յենթարկել Դարալագյազում ապաստանած դաշնակցական բանդաները: Բրիգադի հետ միասին ճակատ են լինում 180-րդ գունդը և դեռևս Ղամարլույի մարտերի ժամանակ աշխատավոր Թուրք գյուղացիությունից կազմակերպված ջոկատը—Վեդիբասարի

կարմիր Թափուրը ղեկավարությամբ Արաս–Կուլի բեկի, վորը հետագայում պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով: Վերջինս դաշնակ–մաուզերիստների դեմ մղած մարտերում իր հերոսություններով հաստատուն հիմք դրեց հայ և թուրք աշխատավորության խաղաղ մարտական դասակարգային պրոլետարական միասնության:

Հայկական Դիվիզիային հաջողվում է արագորեն ջախջախել և հետ շպրտել դաշնակցական բանդաներին: Դարալագյազում ինչպես և ամենուրեք, աշխատավոր գյուղացիությունը կոմունիստների ղեկավարությամբ զինված օգնություն էր ցույց տալիս Կարմիր զորամասերին, խմբապետ Յապոնի բանդայի դեմ մղվող պայքարում: Վերջին և լուրջ ճակատ մնում է «Լեռնային Հայաստանը—Զանգեզուրը»: Կարմիր զորքերն ամեն կերպ աշխատում են այդ ճակատը լիկվիդացիայի յենթարկել առանց արյուն թափելու, խաղաղ ճանապարհով: Այդ թելադրվում էր Զանգեզուրի աշխատավոր գյուղացիության նյութական ծանր կացությամբ, վորն առեղծվել էր դաշնակցական խմբապետների անպատիժ կողոպուտների հետևանքով:

Յելնելով աշխատավորության շահերից, մենք արինք առաջին քայլերը խաղաղ ճանապարհով լիկվիդացիայի յենթարկելու համար Նժդեհին և «Վրացյանի փրկության կոմիտեյին»: Բայց դեռևս բանակցությունները չավարտած, Նժդեհը վճռում է յետ շպրտել կարմիր զորքերին: Այդ հանգամանքն ստիպեց մեզ ավելորդ անգամ ևս ցույց տալ Կարմիր բանակի մարտական հզորությունը, ջախջախել Նժդեհի բանդան և շպրտել նրան Արաքսի հարավային ափը, Պարսկաստան: Ծանր մարտերից հետո մեր զորամասերը գրավում են «Լեռնային Հայաստանը» և հուլիսի կեսերին Զանգեզուր–Ղարաբաղ ճակատում գտնված զորամասերը հավաքվում են Մեղրի: Այսպես են տեղի ունենում վճռական մարտերը յերիտասարդ Կարմիր բանակի և դաշնակցական բանդաների միջև 1921 թվի փետրվարից մինչև հուլիսն ընկած ժամանակաշրջանում: Դաշնակների բանդաների դեմ մղած յերկարատև, համառ և վճռական մարտերը Յերևանում, Նոր Բայազեդում, Յելենովկայում, Դարալագյազում և Զանգեզուրում փառահեղ եջեր գծեցին Հայկական Դիվիզիայի պատմության մեջ:



## ԴԻՎԻԶԻԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՌԻՎՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ ՅԵԿԱՎ ՀԱՂԹԱԿԱՆ ՅԵՎ ԱՄՐԱԿՈՒՌ

Ինչու մենք հաղթեցինք: Արդյոք նրա համար, վոր մենք քանակով գերազանցում եյինք հակառակորդին, և ավելի լավ եյին սպառազինված: Վոչ, դաշնակցական բանակը քանակով ավելի յեր մեզանից: Սպառազինումը համարյա նույնն էր, ինչ վոր մերը: Արդյոք նրա համար, վոր մեր զորքերն ավելի լավ եյին հագնվում ու կերակրվում: Վոչ, ընդհակառակը: Դաշնակների զինվորները շնորհիվ կողոպուտների ու թալանի հագնվում և կերակրվում եյին ավելի լավ: Մեր բանակում խիստ արգելված էր գյուղացիներից մի չոփ անգամ վերցնելը: Կարմիր բանակայինները բավարարվում եյին այն նվազ միջոցներով, ինչ վոր մենք ունեյինք: Ապա ինչու վերջապես դաշնակները խայտառակ պարտություն կրեցին, իսկ կարմիրները հաղթեցին: Վորովհետև մենք կռվում եյինք բանվորների և աշխատավոր գյուղացիների ազատագրման համար, խորհուրդների համար: Վորովհետև մենք ունեյինք վոչ միայն աշխատավորության համակրանքը, այլ և զինված ակտիվ օգնությունը: Դաշնակները կռվում եյին հայ բուրժուազիայի, կուլակների, հոգևորականության շահերի համար իմպերիալիստական պետությունների թելադրանքով: Կարմիր զորամասերը կռվում եյին բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության շահերի համար: Մենք հաղթեցինք նաև շնորհիվ Ռուսաստանի փառապանծ Կարմիր բանակի յեղբայրական օգնության: Մեզ մոտ գոյություն ուներ կարգ ու կանոն, գիտակից հեղափոխական կարգապահություն: Դաշնակցական բանդաներում—քաոս, անիշխանություն, անկարգություն, խմբապետիզմ: Մենք հաղթեցինք, վորովհետև մեր առաջնորդ ու ղեկավարը կոմունիստական կուսակցությունն էր: Քաղաքացիական կռիվների որերին քաղմարմինները, հրամանատարները, կոմունիստները, և կոմյերիտականները հսկայական աշխատանք կատարեցին բանակի դասակարգային միաձուլության ասպարեզում: Նրանք ամենապատասխանատու տեղերում իրենց անձնվիրությամբ, հերոսությամբ, աննկուն հավատով առաջնորդում եյին դեպի հաղթանակ, հանդիսանում եյին մասսաների առաջնորդը:

Դիվիզիան քաղաքացիական կռիվներից դուրս յեկավ հաղթանակով և ամրակուռ: Դա հիմնական գրավականն է գալիք դասակարգային բախումներում մեր հաղթանակի:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՌԻՎՆԵՐՆ ԱՎԱՐՏՎԱԾ ԵՆ: ԴԻՎԻԶԻԱՆ ԹԵՎԱԿՈԽՈՒՄ Է ԽԱՂԱՂ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՇՐՋԱՆԸ:

ՀՍԿԱՅԱԿԱՆ ԱՅՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ, ՎՈՐ ՈՒՆԻ ԴԻՎԻԶԻԱՆ, ՁԵՌՔ ԵՆ ԲԵՐՎԱԾ ԽՍՀՄ, ԱՆԴՐՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ՖՈՆԻ ՎՐԱ:

ՄԵԾ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՋԱՎԱԿ—ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՎԻԶԻԱՆ ԽԱՂԱՂ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԱՐԻՆԵՐՈՒՄ ԱՐՏԱՑՈԼԵԼ Է ԱՅԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԵԼՔԸ:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՅԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՄՐԱՑՈՒՄԸ, ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԱՇԽԱՏԱՎՈՐ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԱՊԸ—ԱՀԱ ԱՅՆ ԲԱԶԱՆ, ՎՈՐԻ ՎՐԱ ԿՈՓՎԵԼ Է ԴԻՎԻԶԻԱՅԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԴԵՄՔԸ:

## ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՎԻԶԻԱՆ—ԱՐԴՅՈՒՆՔ Է ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՃԻՇՏ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ

*Կոմունիստական կուսակցության և խորհրդային իշխանության լենինյան ազգային քաղաքականությունը լիովին իր արտացոլումն է գտնում Բանվորա-Գյուղացիական Կարմիր բանակի շինարարության մեջ:*

*Կարմիր բանակի ազգային բոլոր զորամասերը, այդ թվում նաև Հայկական Դիվիզիան հանդիսանում են այդ քաղաքականության անմիջական արդյունքը:*

*Ցարական բանակում ազգային փոքրամասնությունները հետապնդվում, հալածվում, արհամարհվում եյին: Կարմիր բանակում, անցյալներում ճնշված բոլոր ազգային փոքրամասնությունները օգտվում են հավասար իրավունքներով:*

*Դաշնակցական բանակում ազգային փոքրամասնությունները (թուրքերը, քրդերը և այլն), ոչ միայն տեղ չունեյին, այլ և ենթարկվում եյին ֆիզիկական ոչնչացման:*

*Կարմիր բանակը—ինտերնացիոնալ բանակ է, բոլոր ազգությունների աշխատավորության բանակն է—:*

«ՄԵՐ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՈՒԺԸ ԿԱՅԱՆՈՒՄ Է ՆՐԱՆՈՒՄ, ՎՈՐ ՆԱ ԻՐ ԳՈՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԻՍԿ ՕՐԻՑ ԴԱՍՏԻԱՐԱԿՎՈՒՄ Է ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻԶՄԻ ՎՈԳՈՎ, ՈՒՐԻՇ ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԳԱՆՔԻ ՎՈ-



ԳՈՎ, ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԻՐՈ ՅԵՎ ՀԱՐԳԱՆՔԻ ՎՈԳՈՎ, ՅԵՐԿՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՅԵՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎՈԳՈՎ:

ՅԵՎ ՀԵՆՑ ՆՐԱ ՀԱՄԱՐ, ՎՈՐ ՄԵՐ ԲԱՆԱԿԸ ԴԱՍՏԻԱՐԱԿՎՈՒՄ Է ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻԶՄԻ ՎՈԳՈՎ, ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՎՈԳՈՎ, ՀԵՆՑ ԴՐԱ ՀԱՄԱՐ ԵԼ ՄԵՐ ԲԱՆԱԿԸ ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ Է ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԸ, ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԲԱՆԱԿԸ»: (*ՍՏԱԼԻՆ*):

*Վորպեսզի բոլոր ազգությունների աշխատավորները ձեռք-ձեռքի տված պաշտպանեն պրոլետարական դիկտատուրայի յերկիրը—ԽՍՀՄ, վորպեսզի մայրենի լեզվով ուսումնասիրեն ռազմաքաղաքական գործը, Կարմիր բանակում կազմակերպվել են ազգային զորամասեր:*

*Գալիք մարտերում Հայկական Դիվիզիայի մարտիկները իրենց կրծքով կպաշտպանեն ամբողջ Խորհրդային Միությունն այնպես, ինչպես և մեր յեղբայրական Ադրբեջանյան և Վրացական դիվիզիաների մարտիկները:*

ԴԻՎԻԶԻԱՆ ԻՐ ԿԱԶՄՈՒՄ ՈՒՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ: ՏԱՍՆ ՅԵՎ ՄԵԿ ՏԱՐԻ ԱՌԱՋ ՀԱՅ ՅԵՎ ԹՈՒՐՔ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԸ ԿՈՏՈՐՈՒՄ ԵՅԻՆ ԻՐԱՐ: ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՔ ԸՆԴՄԻՇՏ ԱՆՀԱՅՏԱՑԵԼ ԵՆ ԱԶԳԱՄԻՋՅԱՆ ՅԵՐԿՊԱՌԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ՀԱՅ, ԹՈՒՐՔ ՅԵՎ ՔՈՒՐԴ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵԼՆԵԼՈՎ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՇԱՀԵՐԻ ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆԻՑ, ՄԻԱՍԻՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ ԵՅԻՆ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ-ՄԱՈՒԶԵՐԻՍՏԱԿԱՆ ԲԱՆԴԱՆԵՐԻ ԴԵՄ: ԲՈԼՈՐ ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՄԵՆՔ ԴԻՎԻԶԻԱՅՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԵՆՔ ՀԱՏՈՒԿ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ— ԹՈՒՐՔԵՐԻՑ, ՔՐԴԵՐԻՑ ՅԵՎ ՌՈՒՍՆԵՐԻՑ:

*Թուրքերից, քրդերից և ռուսներից բաղկացած ստորաբաժանումների գոյությունը Հայկական Դիվիզիայում, հայերից և այլ բաղկացած ստորաբաժանումները Ադրբեջանյան և Վրացական դի-*

Гос. Публичная б-ка ССР
.Масс. Б-ка-Чит.
12572-57

վիզիաներում, այսինքն այն, վոր մենք յեղբայրական կապերով կապված ենք Ադրբեջանյան և Վրացական դիվիզիաների հետ, դուր չի գալիս դաշնակներին, մենշևիկներին և մուսավաթիստներին:

Ինչպես միշտ, դաշնակներն աշխատում են ազգայնական տրամադրություններ հրահրել և դրանով իսկ թուլացնել մեր հզորությունը: Դաշնակների բոլոր հակահեղափոխական փորձերը ստացել և ստանում են ջախջախիչ հակահարված: Ինտերնացիոնալ կապը յեղբայրական դիվիզիաների հետ անշեղորեն ամրանում է ազգային հարցում թեքումների դեմ անողոք պայքար մղելու հիման վրա:

«Ավելի բարձր պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշը»—ահա մեր լոզունգը:

---

## ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՍԻՍՏԵՄԸ

Կարմիր բանակի համալրման սիստեմը, աշխատավոր մասսաների ուսուցումը միանգամայն համապատասխանում են ԽՍՀՄ զինված ուժերի շինարարությանը: Այդ սիստեմը հնարավորություն է տալիս վոչ մեծ մշտական բանակ ունենալու դեպքում խաղաղ ժամանակ պատրաստել անհրաժեշտ կադրեր և սովորած ոժանդակներ՝ մեր վրա նոր հարձակման դեպքի համար, յերբ կպահանջվի զորահավաքի յենթարկել աշխատավորների միլիոնավոր մասսաներին:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ: Մեր յերկրում զինվորական ծառայությունը կառուցված է ընդհանուր զինապարտության հիման վրա:

«ԽՍՀՄ ՄԻՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ Ե ՄԻՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: ԶԵՆՔԸ ԶԵՌՔԻՆ ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՏԱՐՈՒՄ ԵՆ ՄԻՄԻԱՅՆ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԸ: ԱՆԱՇԽԱՏ ՏԱՐՐԵՐԻ ՎՐԱ ԴՐՎՈՒՄ ԵՆ ԱՅԼ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ»:

Այսպես է ասված մեր որենքում պարտադիր զինվորական ծառայության մասին:

Այդ որենքով էլ սահմանվում է պարտադիր զինվորական ծա-



ռայություն Միության բոլոր քաղաքացիների համար: Զինվորական ծառայությունից վոչ վոք չի ազատվում, բացի նրանցից, վորոնց որենքով վերապահված են արտոնություններ զինվորական ծառայությունն անցնելու վերաբերյալ:

Անաշխատ տարրերը, խորհուրդներ ընտրելու իրավունքից զրկվածները, քաղաքական իրավունքների զրկումով՝ դատապարտվածները գրանցվում են թիկունքային աշխարհազորում (ոպոլչենիյե): Նրանք չեն ոգտվում վոչ ժամկետով և վոչ ընտանեկան-գույքային դրության արտոնություններով:

Ընդհանուր պարտադիր զինվորական ծառայությունն անցնում են արական սեռի բոլոր աշխատավորները 21-ից մինչև 40 տարեկանը ներառյալ: Այդ ժամանակամիջոցը բաժանվում է յերկու ժամկետի՝ իսկական զինվորական ծառայություն և պահեստում լինելը: Իսկական զինվորական ծառայության մեջ աշխատավորը համարվում է զինվորական. պահեստայինները համարվում են զինապարտներ:

ԻՍԿԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ: Քաղաքացիները իսկական զինվորական ծառայության են կանչվում 21 տարին լրանալուց հետո:

Կանչվածները զինվորական ծառայությունն անցնում են կամ Կարմիր բանակի կադրային մասերում, կամ յերկրային զորամասերի փոփոխիկ կազմում, կամ ռազմարտադրական ծառայության մեջ և արտազորային կարգով: Շարքային կազմի իսկական զինվորական ծառայությունը խաղաղ ժամանակ շարունակվում է 5 տարի:

Կարմիր բանակի կադրային մասերում իսկական զինվորական ծառայությունը բաղկացած է՝ անընդհատ ծառայությունից կադրային զորամասում և յերկարատև արձակուրդից: Զենքի ու մասնագիտության զանազան տեսակների անընդհատ ծառայության համար սահմանված են զանազան ժամկետներ: Ծովային տորմիղի համար անընդհատ ծառայության ժամկետն է՝ 4 տարի և 1 տարի յերկարատև արձակուրդ: Ոդային, տորմիղի մասնագետների համար առանձին պահպանության զորքերի համար, զինվորական ծառայության մեջ ուսուցման կուրսն անցած պայտարների և գրագրերի համար—3 տարի անընդհատ ծառայություն և 2 տարի յերկարատև արձակուրդ:

Կարմիր բանակի մնացած բոլոր զորամասերում, այսինքն՝ հետևազորում, հրետազորում, հեծելազորում և այլն, անընդհատ

ծառայության ժամկետը զորամասերում յերկու տարի չէ և յերեք տարի յերկարատեվ արձակուրդ:

Զորամասում անընդհատ ծառայության այդ ժամկետները անհրաժեշտ են ռազմական գործը ինչպես հարկն է սովորելու համար: Հասկանալի յե, թե ինչպես միքանի մասնագետների համար ու ծովային տորմիղում ծառայությունն ավելի յերկար է, քան մյուս զորամասերում. այնտեղ բարդ է աշխատանքը և ավելի դժվար է սովորել:

Ցարական բանակում զինվորն ավելի յերկար ժամանակ էր ծառայում՝ հետևազորում, հեծելազորում, հրետազորում—յերեք տարի. մասնագիտական զորքերում—չորս տարի, իսկ տորմիղում—հինգ տարի:

Յերկարատև արձակուրդում յեղած ժամանակ կարմիր բանակայինները կարող են կանչվել կրկնողական հավաքների վոչ ավելի, քան մի ամիս ժամկետով:

ՅԵՐԿՐԱՅԻՆ ԶՈՐԱՄԱՍԵՐ: Յերկրային զորամասերն ունեն փոքրաթիվ կադր (զորամասի մշտական կազմը) և զինվորականների փոփոխիկ կազմ: Փոփոխիկ կազմի կարմիր բանակայինը իսկական զինվորական ծառայությունն անցնում է յերկրային զորամասերում նույնպես հինգ տարվա ընթացքում, բայց վոչ այնպես, ինչպես Կարմիր բանակի կադրային զորամասերում:

Նա շարունակ չի լինում զորամասում յերկու կամ չորս տարի, այլ ժամանակ առ ժամանակ ծառայության 5 տարվա ընթացքում կանչվում է վարժական հավաքների: Միայն այդ վարժական հավաքների ժամանակ փոփոխիկ կազմի կարմիր բանակայինը գտնվում է զորամասում, իսկ մնացած ամբողջ ժամանակ—հավաքների միջև ընկած ժամանակաշրջանում—փոփոխիկ կազմի կարմիր բանակայինը գտնվում է տանը և հաշվվում է արձակուրդում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐՏԱԶՈՐԱՅԻՆ ԿԱՐԳԸ: Իսկական զինվորական ծառայությունն անցնելու համար կանչված, բայց Կարմիր բանակի կադրային զորամասերը չմտածները կամ յերկրային զորամասի փոփոխիկ կազմի մեջ չմտածները իսկական զինվորական ծառայությունն անցնում են արտազորային կարգով: Ժամանակ առ ժամանակ նրանք կանչվում են վարժական հավաքների, վորտեղ սովորում են ռազմական գործը:

ՊԱՀԵՍՏՈՒՄ ԼԻՆԵԼԸ: Իսկական զինվորական ծառայությունն անցնելուց հետո, կարմիր բանակայինները ի պահեստ են



արձակվում բանակի շարքային կազմը: Պահեստում յերկու հերթ կա: Առաջին հերթում զինապարտը հաշվվում է մինչև 34 տարեկան հասակը, յերկրորդ հերթում—մինչև 40 տարեկան հասակը:

Ժամանակ առ ժամանակ պահեստայինը կանչվում է վարժական ստուգողական հավաքների 2—4 շաբաթով:

Ի՞նչ կարգով են աշխատավորները անցնում իսկական զինվորական ծառայությունը:

## ԱՇԽԱՏԱՎՈՐ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Պրոլետարական դիկտատուրայի յերկիրը, վորտեղ աշխատավոր լայն մասսաները կսովորեն ռազմական գործը և կկարողանան զենքը ձեռքին պաշտպանել իրենց անկախությունը կապիտալիստական յերկրների հարձակումներից, իսկապես իրենից կներկայացնի կատարելապես անմատչելի ու անպարտելի մի բերդ, սոցիալիզմի անհաղթելի մի ուժ: Յեվ հենց կոմունիստական կուսակցության ծրագիրն էլ մատնանշում է այդպիսի ռազմական ուսուցման անհրաժեշտության վրա:

«ԱՆՀՐԱԺԵՇՏ Է, ԱՍՎԱԾ Է ԾՐԱԳՐՈՒՄ,—ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾԸ ԱՄԵՆԱԼԱՅՆՈՐԵՆ ՍՈՎՈՐԵՑՆԵԼ ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐԻՆ, ԿԻՍԱՊՐՈԼԵՏԱՐՆԵՐԻՆ, ՄՏՑՆԵԼ ԴԸՊՐՈՑՈՒՄ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ»:

Այդ է, վորպես հիմք ընդունված մեր յերկրում աշխատավոր մասսաների ծավալուն ռազմական պատրաստության համար:

Մասսայական ռազմական աշխատանքը, ռազմական գիտելիքների պրոպագանդը աշխատավոր մասսաների համար, նրանց ռազմականացման համար տարվում են տարբեր ձևերով, ինչպես օրինակ՝ կազմակերպությունները գործարաններում, Ֆաբրիկներում, հիմնարկություններում, կոլտնտեսություններում, խորհտնտեսություններում, գյուղում ռազմական անկյուններ և խըմբակներ կազմակերպելը՝ ռազմական գործը ուսումնասիրելու համար, այլև ուսումնասիրելու համար ռազմական տեխնիկան, հրաձգային խմբակների, սանիտարական խմբակների կազմակերպու-

մը, ՊաՁը-Ավիաքիմ խմբերի կազմակերպումը, ձգարանների (տիրերի) կառուցումը, ռազմական քաղաքիկների, պաշտպանության տների կառուցումը, սպորտային կազմակերպությունները, ռազմական գրականության, պլակատների և այլն տարածման խմբակների կազմակերպումը: Դպրոցներում, դպրոցական հաստատություններում մտցված են հատուկ առարկաներ ռազմական գործի հիմունքները ուսումնասիրելու վերաբերյալ, կազմակերպվում են ռազմական կաբինետներ, անկյուններ և այլն: Այս բոլորը օգնում են աշխատավոր լայն մասսաների շրջանում ռազմական պատրաստությունը ծավալելուն:

Աշխատավորների ռազմական պատրաստության գործում խոշորագույն դեր է կատարում աշխատավորների կամավոր ընկերությունը, վոր ստեղծված է ԽՍՀՄ պաշտպանությանն ու ավիացիոն-քիմիական (ՊաՁը-Ավիաքիմ) շինարարությանն աջակցելու համար: Այդ ընկերությունն այժմ իր շարքերում ունի մինչև 10 միլիոն աշխատավորներ: ՊաՁը-Ավիաքիմն արդեն կատարել է հսկայական աշխատանք աշխատավորների ռազմական պատրաստության, ռազմական գիտելիքների պրոպագանդի, պահեստի սպակազմի վերապատրաստության գործում և այլն: Մյուս հասարակական կազմակերպությունները նույնպես, ինչպես Մոպրը, Ավտոդորը և այլն, իրենց գործունեությամբ ամրացնում են ԽՍՀՄ պաշտպանունակությունը:

Յերկրի պաշտպանության ամրացման գործում հսկայական դեր է կատարում Կոմյերիտմիությունը:

Աշխատավոր յերիտասարդության ռազմական պատրաստությունը կոմյերիտմիությունը համարում է իր կարևորագույն խնդիրներից մեկը: Նա ՊաՁը-Ավիաքիմի, Ավտոդորի և մյուս հասարակական կազմակերպությունների շարքերն է ներգրավում աշխատավոր յերիտասարդությանը: Կոմյերիտմիության IX համագումարը վորոշեց, վոր այն ընկերները, վորոնք թերագնահատում են պատերազմի վտանգը, վորոնք չեն անցնում ռազմական ուսուցումը, չեն կարող մնալ կոմյերիտմիության շարքերում:

Աշխատավորների ռազմական պատրաստության մեջ կարևորագույն դեր են խաղում արհմիությունները: Կազմակերպելով բանվորական մասսաներին, արհմիությունները ամեն կերպ հոգ են տանում և՛ նրանց ռազմական պատրաստության մասին:

Այսպիսով աշխատավոր մասսաների ռազմական պատրաստությունը հանդիսանում է վորպես մի կարևորագույն խնդիր՝ յերկ-





ԱՊԱԳԱՅԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ Ե ԼԻՆԵԼՈՒ
Մոսկվայի կոմյերիտականների ռազմական վարժական յերթը

րի պաշտպանության ու նրա Կարմիր բանակի ամրացման գործում:

Կարմիր բանակը ամեն կերպ օգնում է աշխատավոր մասսաների ռազմական պատրաստության զարգացմանը, նրանց շրջանում ռազմական գիտելիքների պրոպագանդ մղելու գործին և ռազմական գործի պրոպագանդին:

Ի՞նչ նշանակություն ունի աշխատավորների ռազմական պատրաստությունը Միության և Կարմիր բանակի ամրացման համար:

Ի՞նչ անելիքներ ունեն՝ կոմյերիտմիությունը, արհմիությունները, ՊԱՁԸ-Ավիաքիմը և մյուս կազմակերպությունները աշխատավորների ռազմական պատրաստության ասպարեզում:

## ԽՍՀՄ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԸ

Մեր Միության զինված ուժերը կազմում են՝ Կարմիր բանակի ցամաքային ուժերը, Կարմիր ծովային տորմիղը և Կարմիր օդային տորմիղը:

Կարմիր բանակի կազմի մեջ են մտնում նույնպես հատուկ նշանակության զորքերը,—Միացյալ Պետական Քաղաքական Վարչության զորքերը (ՄՊՔՎ) և ԽՍՀ Միության ուղեկցախմբային պահպանությունը:

Ամեն մի կարմիր բանակային, վոր Կարմիր բանակն է կանչվում, նայած նրա ֆիզիքական հատկություններին, գրագիտությանը և զբաղմունքի տեսակին, գրանցվում է հետևազորի, հեծելազորի, հրետազորի կամ վորևե այլ զորամասի մեջ:

Զորքերի տեսակների համագործակցությունը—բանակի մարտական գործունեյության հիմքն է: Մենք բանակում ունենք զորքերի տարբեր տեսակներ. ինչպես որինակ՝ հետևազոր, հեծելազոր, հրետազոր և այլն: Զորքերի յուրաքանչյուր տեսակն ունի իրեն առանձին հատկությունները, իր զենքը, իր խնդիրներն ու պարտականությունները և իր գործողության հատուկ ձևը (յեղանակը). Յեվ զորքերի յուրաքանչյուր տեսակ այնպես է կազմակերպված, այնպես է կառուցված, վոր նա կարողանա, վորքան հնարավոր է, լավագույն ձևով և հաջողությամբ կատարի այն խնդիրները, վորոնք առաջադրվում են նրան, վորքան հնարավոր է լավագույն ձևով ոգտագործի իր զենքը և իր հատկությունները մարտում:

Մարտը զորքերի միայն մի տեսակով չի տարվում, այլ զորքերի զանազան տեսակների միատեղ ջանքերով: Զորքերի յուրաքանչյուր տեսակ մարտում ունի իր մասնավոր խնդիրը: Բայց զորքերի բոլոր տեսակների ջանքերը, բոլոր զորամասերի ջանքերն ուղղված են միայն մի նպատակի—ջախջախել և հաղթել թշնամուն: Յեվ բանակն այնպես է կառուցված, վոր կարելի լինի մարտում լավագույն ձևով ոգտագործել զորքերի տարբեր տեսակների հատկություններն ու զենքը՝ հակառակորդի վրա վճռական հաղթանակ տանելու համար: Այսպես ուրեմն, բանակի մարտական գործունեյությունը կառուցվում է զորքերի տարբեր տեսակների միատեղ աշխատանքի, համագործակցության վրա:



Զորքերի բոլոր տեսակները, բոլոր զորամասերը մարտում գործում են հրամանատարության միասնական պլանով: Յուրաքանչյուր զորամաս ստանում է իր մարտական խնդիրը: Յուրաքանչյուր զորամաս, կատարելով իր մարտական խնդիրը, աջակցում է մարտի ընդհանուր հաջողությանը, հակառակորդի դեմ հաղթությանը:

Հետևակը, հանդիսանալով հիմնական, զորքերի ամենից բազմամարտ տեսակը, կատարում է ամենից ավելի պատասխանատու մարտական աշխատանք: Հետևակի հաջող գործողություններից գլխավորապես կախված է մարտի ու ճակատամարտի վերջնական հաջողությունը: Հետևակը առաջխաղալով, հաղթահարելով հակառակորդի արգելքները, նրա հետ սվինամարտի յե բռնվում, վոչնչացնում է նրա կենդանի ուժը: Հետևակը գրավում, ամրացնում ու իր ձեռքում է պահում տեղանքը, յետ է մղում հակառակորդի հարձակումը և նրա՝ տեղանքին տիրելու փորձերը:

Զորքերի մյուս տեսակների մասերը կարող են մարտի ընդհանուր պլանի համեմատ կատարել նաև ինքնուրույն մարտական խնդիրներ: Սակայն զորքերի մյուս տեսակների ամենագլխավոր խնդիրն է օգնել հետևակին՝ կատարելու իր մարտական խնդիրները: Հրետանին քարուքանդ անելով հակառակորդի խրամատները, լարացանցերը, նրա կենդանի ուժը, ոգնում է այդպիսով հետևակի առաջ գնալուն: Հետևակն ապահովում է հրետանու կրակային դիրքերը, գրավում է նրա համար հարմար դիտակետեր, վորտեղից կարելի յե ղեկավարել հրետանու աշխատանքը: Հեծելազորն ոգնում է հետևակին՝ հակառակորդին հետախուզելու, կամ հանկարծակի հարված հասցնելով հակառակորդի թևին, քայքայում է նրա շարքերը, ջախջախում է նրան և այդպիսով ոգնում է հետևակին, վոր վերջինս վճռական հաղթություն տանի: Սավառնակները տեղեկություններ են տալիս հակառակորդի թիկունքի մասին, ռմբակոծում են այն, յետ են մղում թշնամու սավառնակների հարձակումը: Քիմիական մասերը անվնաս են դարձնում հակառակորդի կողմից վարակված տեղանքը, քիմիական արգելքներ են ստեղծում հակառակորդի շարժման ճանապարհների վրա: Ճարտարագիտական մասերը կառուցում են կամուրջներ, գետանցներ, արհեստական փակոցներ, ամեն տեղ ապահովելով իր զորքերի մանյովրը և դժվարացնելով հակառակորդի մանյովրը:

Այսպես ուրեմն, զորքերի բոլոր տեսակների մարտական աշխատանքն ուղղված է մի նպատակի—ընդհանուր ջանքերով հաղթել թշնամուն: Առանց զորքերի բոլոր տեսակների փոխադարձ օգնության, առանց բոլոր զորամասերի փոխադարձ օգնության հնարավոր չէր լինի այժմ մարտ մղել: Միայն զորքերի բոլոր տեսակների միասնեղ ջանքերով, նրանց գործողությունների համաձայնեցումով կարելի յե հաղթություն տանել մարտում: Հետևապես զորքերի բոլոր տեսակների սերտ կապն ու համագործակցությունը ժամանակակից մարտի հիմքն են կազմում:

Մարտում զորքերի բոլոր տեսակների գործողությունների համաձայնեցումը, համագործակցությունը ձեռք են բերվում հրամանատարության միասնական մարտական պլանով, մարտում զորքերի տարբեր տեսակների մասերի միջև անընդհատ կապի հաստատումով, հրամանատարության կողմից զորքերի տարբեր տեսակների մասերին առաջադրված խնդիրների լավ իմանալով, և մարտում զորքերի բոլոր տեսակներին ու զորամասերի իրար փոխադարձ մշտական օգնությամբ: Կարմիր բանակում զորքերի բոլոր տեսակների դասակարգային շահերի միասնությունը, քաղաքական և ռազմական դաստիարակության ու ուսուցման ընդհանրությունը հաստատուն հիմք են տալիս մարտում նրանց փոխգործողության և ընկերական օգնության: Մեր բանակում զորքերի տարբեր տեսակների միջև գոյություն ունի ամուր դասակարգային ընկերական զոդում, լիակատար փոխադարձ վստահություն:

Յուրաքանչյուր կարմիր բանակային պետք է ծանոթ լինի զորքերի մյուս տեսակների կազմակերպման, խնդիրների և մարտական աշխատանքի հետ, վորպեսզի իմանա թե ինչպես են նրանք մարտում համագործակցում իրար, ինչ խնդիրներ են նրանք կատարում, ինչպես են օգնում իրար մարտում՝ հակառակորդին հաղթելու համար:

Ինչու առանց զորքերի տարբեր տեսակների փոխգործողության չի կարելի հաջողությամբ մարտ վարել:

Ի՞նչպես է ձեռք բերվում զորքերի տեսակների փոխգործողությունը մարտում:



# ՀԵՏԵՎԱԶՈՐ

Հետևազորը զորքերի հիմնական և ամենաբազմամարդ տեսակն է: Ցեվ հենց գլխավորապես հետևակից է կախված մարտի վերջնական հետևանքը: «Հետևազորը—ասում է մեր Մարտական կանոնադրքը,—ամենամեծ չափով արտացոլում է յերկրի մարտական հզորությունը: Հետևազորի հաջող գործողությունները կանխորոշում են մարտի ու ճակատամարտի վերջնական հաջողությունը»:

Բանակում ու մարտում հետևակի (հետևազորի) այդ վիթխարի նշանակությունը բղխում է այն առանձնահատկություններից ու հատկություններից, վորոնցով օժտված է հետևակը: Ժամանակակից մարտում հետևակը գործում է զորքերի մյուս տեսակների օգնությամբ, բայց ինքը հետևակն ունի միջոցների անհրաժեշտ քանակը՝ ինքնուրույն կերպով մարտական խնդիրներ կատարելու համար, առանց զորքերի մյուս տեսակների օգնությամբ:

Հետևակը կարող է իր ուժերով սարքավորել տեղանքը, պաշտպանություն տանել, իր կրակով հակառակորդի գրոհը պարապաներ և բռնամարտում—սվինով ու նռնակով—հաղթություն ձեռք բերել: Հետևակը կարող է նույնպես ինքնուրույն կերպով գրավել, ամրացնել և իր ձեռքում պահել տեղանքը, հաջողությամբ յետ մղելով հակառակորդի գրոհները: Հետևակն ավելի, քան զորքերի մյուս տեսակներից վորևէ մեկը, կարող է կռվի իր միջոցներով ավելի համառ ու յերկարատև մարտ մղել:

Հետևակն օժտված է ամենալավ ընդունակությամբ՝ հարմարվելու տեղանքին: Ցեվ ուժեղ կրակի տակ հետևակը կարող է առաջ շարժվել, մեկ-մեկ վազեվազք կատարելով, թաքնվելով տեղանքի ծալքերում ու խորդուբորդ տեղերում, աչքից կորչելով ու հրետանու հակառակորդից:

Հետևակը կարող է, հարմարվել տեղանքին, համարձակ մանյովրով հաղթահարել այն բոլոր արգելքները, վորոնք հանդիպում են ճանապարհին: Նա կարող է շարժվել, մանյովրել թե դաշտերում, թե անտառներում, և ամենաբազմազան պայմաններում, տարվա ու օրվա ամեն ժամանակ: Հետևակն ավելի քիչ է կախված յեղանակի ու տեղանքի պայմաններից, քան զորքերի մյուս տեսակներից վորևէ մեկը, իր գործողությունների ժամանակ:

Այն ինչ հաճախ անմատչելի յե հեծելազորի կամ հրետանու համար, միանգամայն հաղթահարելի յե հետևակի կողմից: Գիշերը,

վատ ճանապարհը, ճահիճը, անտառը, լեռները, ձյունը,—այս բոլորը չեն կարող կանգնեցնել հետևակի շարժումը:

Հետևակի ժամանակակից գործողությունների հիմքն է հանդիսանում կենդանի ուժի հուժկու կրակով շարժման ու հարվածի զուգակցումը:

Մարտում հետևակին կարող են առաջադրվել ամենաբազմազան խնդիրներ: Սակայն կան մի քանի խնդիրներ, որ կարող է կատարել միայն հետևակը: Միայն հետևակը կարող է իր համառ ու տոկուն շարժումով, զուգակցված կրակի հետ, հաղթահարել հակառակորդի բոլոր արգելքները և, մոտենալով հակառակորդին, վճռական բռնամարտով, վերջնականապես կոտրել նրա դիմադրությունը և ոչնչացնել նրա կենդանի ուժը:

Զորքերի մյուս տեսակները կարող են ավերել հակառակորդի դիրքերը, քշել նրան այնտեղից, բայց միայն հետևակը կարող է գրավել հակառակորդի այդ դիրքերը, ամրացնել նրանց և պահել իրենց ձեռքում, հետ մղելով հակառակորդի բոլոր հարձակումները՝ այդ տեղանքին տիրելու փորձերը: Ահա թե ինչու բոլոր բանակներում հետևակը հանդիսանում է բանակի խոշոր ու գլխավոր մասը և զորքերի հիմնական տեսակը:

Հետևակն այնպիսի սիստեմների զենքերով է սպառազինված, որ նրան տալիս են խոշոր կրակային հզորություն և միաժամանակ նրանք այնքան ծանր ու մեծ չեն, որ դժվարացնեն շարժումը մարտում, և հնարավորություն են տալիս հետևակին հաջողությամբ կատարել մարտական խնդիրները: Ժամանակակից հետևակն սպառազինված է հրացանով, թեթև (ձեռքի) և ծանր (հաստոցավոր) գնդացրերով, ձեռքի ու հրացանային նռնակներով: Հետևակը նույնպես հայթայթված է գումարտակային ու գնդային հրետանիով—դաշտային թեթև հրանոթներով ու ականանետերով:

Ի՞նչ հիմնական հատկություններ ունի հետևակը:

Ինչո՞ւ հետևակը հանդիսանում է զորքերի հիմնական տեսակ:

Ինչո՞վ է սպառազինված ժամանակակից հետևակը:



# ՀԵԾԵԼԱԶՈՐ

Հեծելազորի հիմնական հատկությունը՝—այդ նրա շարժունակությունն ու գործողությունների արագությունն է, որոնք հնարավորություն են տալիս նրան արագորեն փոխադրվել մի տեղից մյուս տեղ և հանկարծակի հարվածներ հասցնել հակառակորդին: Հեծելազորն իր ձեռքի տակ ունենալով սառը և հզոր հրազեն, ընդունակ է մարտ մղել թե՛ հեծյալ և թե՛ հետիոտ (վոտավոր) շարքում:

Հեծելազորի շարժունակությունը նրան հնարավորություն է տալիս խոր հետախուզություններ կատարել հակառակորդի դասավորության շրջանում, խորը թիկնանցեր ու շրջանցումներ անել նրա թևերում: Նա կարող է նույնպես ճեղքել անցնել հակառակորդի թիկունքը և խորը ռեյդեր կատարել նրա թիկունքում: Նա կարող է հանկարծակի հայտնվել հակառակորդի թևում և հարվածել նրան: Նա կարող է հաջողությամբ հետապնդել նահանջող հակառակորդին և հասնել նրան: Հանկարծակի հայտնվելով և հախուռն հարվածով—հեծյալ գրոհով—հեծելազորը կարող է ուժգին հարված հասցնել հակառակորդին:

Ժամանակակից հեծելազորը հայթայթված է հզոր հրազենով և կռվի զանազան տեխնիկական միջոցներով: Իսկ այդ հանգամանքը հեծելազորի շարժունակության և գործողությունների արագության հետ միասին, նրան տալիս է է՛լ ավելի մեծ նշանակություն ժամանակակից մարտում: Այսպիսով՝ հեծելազորի դերն ու ուժը խոշոր չափով մեծացել են: Հեծելազորը կարող է նաև ինքնուրույն մարտեր մղել, պատրաստել հետիոտ կամ հեծյալ գրոհ կամ միաժամանակ թե՛ հեծյալ և թե՛ հետիոտ (համակցված) մարտ վարել, օգնել իր գրոհին ուժգին կրակով և իր ձեռքում պահել գրաված պունկտերը կամ տեղը:

Այսպես ուրեմն՝ հեծելազորը կարող է գործել ինչպես հետևազորի հետ միասին, օգնելով նրան կատարելու մարտական խնդիրներ, այնպես էլ ինքնուրույն կերպով: Ինքնուրույն կերպով սովորաբար գործում են հեծյալ մասսաները, որոնք միանալով կազմում են խոշոր միավորումներ—առանձին հեծյալ բրիգադներ, դիվիզիաներ, կորպուսներ, բանակներ: Այդպիսի խոշոր հեծյալ միավորումները իրենց կազմում ունեն նաև հզոր կրակային տեխնիկա—հրետանի, գրահամեքենաներ, արագընթաց տանկեր, սավառնակներ: Այդ նրանց հնարավորություն է տալիս կատարել միանգամայն ինքնուրույն բարդ մարտական խնդիրներ: Այդպի-

ռի հենակետը կոչվում է բանակային, կամ ստրատեգիական հենակետ:

Հետևակի մարտական աշխատանքին կամ զորքերի մյուս տեսակների աշխատանքին աջակցելու համար զորական միավորումների կազմում կան մի քանի մեծ հեծյալ միավորումներ—հեծյալ հետախուզների դասակներ, հեծելավաշտեր (էսկադրոններ), բաժնյակներ (դիվիզիոններ): Այդպիսի հենակետը կոչվում է զորական հենակետ և գործում է այն զորական միավորումների կազմում, որոնց նա կցվում է, գլխավորապես հետախուզության և պահպանության համար: Առանձին հեծյալ զորամասեր կարող են առանձնացվել որպես հետախուզական ջոկատներ: Հեծելազորը խոշոր օգնություն է ցույց տալիս հետևակին մարտում:

Հեծելազորը, ինչպես և հետևազորը սպառազինված է հրազենի ժամանակակից տեսակներով: Սակայն, բացի հրացաններից, գնդացրերից, նռնակներից, հեծելազորն ունի նաև թրեր հեծյալ հարվածի համար: Հեծյալ զորամասերը հայթայթված են և՛ գնդացրերով՝ թեթև և հաստոցավոր, հատուկ սայլակների վրա տեղափոխելի, հեծելազորն ունի նաև հեծյալ հրետանի, զրահամեքենաներ, քիմիական հարձակման և պաշտպանության միջոցներ, կապի զանազան տեխնիկական միջոցներ, սակրավորական և այլն:

Որո՞նք են հեծելազորի հիմնական հատկությունները:

Ի՞նչպիսի մարտական խնդիրներ կարող է կատարել հեծելազորը:

Ի՞նչպես է հեծելազորը գործակցում հետևակին:

## ՀՐԵՏԱՆԻ

Հրետանու խնդիրն է՝ իր հուժկու կրակի ուժով փոչնչացնել հակառակորդի կենդանի ուժին, ճնշել կամ փոչնչացնել նրա կրակային միջոցները և ավերել այն խոչընդոտները, արգելքները, որոնք խանգարում են հետևակին առաջ շարժվել կամ հաջողությամբ պաշտպանվել: Հրետանին իր կրակի ուժգնությամբ ներգործում է հակառակորդի վրա, ճնշելով նրա կամքը դեպի դիմադրությունը կամ հարձակումը, և այդպիսով իսկ օգնում է հետևակին նախապատրաստական կրակումներով կատարելու իրենց առաջադրած խնդիրները:



Հրետանին կռվում է հակառակորդի հրետանու դեմ, փոչընչացնում է նրան կամ ստիպում է դադարեցնել կրակը: Հրետանին կռվում է տանկերի, զրահապատ մեքենաների զրահագնացքների դեմ, փոչնչացնում է գնդացրային բները, ավերում է լարափակոցները, նրանց մեջ անցքեր է բացում հետևակի համար, ավերում է ամեն տեսակ ծածկարաններ, խրամատներ, ամրություններ:

Իր կրակի ուժգնությամբ հրետանին թույլ չի տալիս հակառակորդին կուտակվելու գրոհի համար, հնարավորություն չի տալիս հակառակորդին առաջ շարժվելու, մոտեցնելու իր օժանդակներին: Հրետանին իր կրակով ուղեկցում է հետևակին նրա հարձակման մեջ, աջակցում և օգնում է նրան կատարելու իր առաջադրած խնդիրները:

Հատուկ զենիթային հրետանին պայքար է մղում օդային թշնամու դեմ: Հրետանին մեծ ուժով կարող է ռմբակոծել տասնյակ կիլոմետրերով հակառակորդի հեռավոր թիկունքները:

Այդպիսով հրետանին իր մարտական աշխատանքով հետևակին մշտական և ամենավճռական աջակցություն է ցույց տալիս: Հրետանու գործողությունները սերտորեն կապված են զորքերի այլ տեսակների և առաջին հերթին հետևակի գործողությունների հետ: Միայն լիակատար համագործակցությամբ հետևակի հետ, ամենասերտ, անընդհատ կապ պահպանելով նրա հետ, հրետանին իր հուժկու կրակով կարող է ազդեցություն ունենալ մարտի ընթացքի վրա, օգնել հետևակին թշնամուն հաղթելու մեջ: Այդ պատճառով մարտում առանձնապես կարևոր է կապը հետևակի և հրետանու հետ: Օգնություն ցույց տալով հետևակին իր կրակով, հրետանին պետք է ճիշտ գիտենա, թե մարտի յուրաքանչյուր շրջանում ինչպիսի նշանների, հետևակի համար ինչպիսի խոչընդոտների դեմ, ինչպիսի ուղղությամբ և երբ պետք է ուղղել կրակը: Այդ պատճառով հետևակի ու հրետանու միջև մշտական կապ պետք է լինի մարտի ամբողջ ընթացքում:

Հրետանու մարտկոցներին կից կան հետևակի հետ կապի հատուկ ջոկեր: Մարտի սկզբից հետևակի հետ կապի այդ ջոկերն ուղարկվում են մարտկոցներից հետևակային այն զորամասերի հրամանատարների մոտ, որոնց այդ մարտկոցներն օգնում են իրենց կրակով: Այդպիսով հետևակային հրամանատարները հնարավորու-

թյուն ունեն մարտի յուրաքանչյուր շրջանում նայած փոխվող պարագային ցուցումներ տալու հրետանուն՝ հետևակի օգնության համար նրա կատարած մարտական աշխատանքում:

Նայած հրանոթների տրամաչափին ու հատկություններին, հրետանին բաժանվում է զորական և մեծ ուժգնությամբ հրետանու:

Զորական հրետանուն պատկանում են այն սիստեմի հրանոթները, վորոնք մտնում են զորական միավորությունների կազմի մեջ և իրենց հատկություններով բավարարում են մարտի պահանջներին և հետևակի ու հրետանու համագործակցության հաջողությանը:

Մեծ ուժգնությամբ հրետանին չի մտնում զորական միավորությունների կազմի մեջ և կատարում է հատուկ խնդիրներ: Մեծ ուժգնությամբ հրետանու սպառազինության վրա գտնվում են ավելի խոշոր տրամաչափի,—155 միլիմետր և ավելի բարձր տրամաչափի,—հրանոթներ: Այդ հրանոթներն ունեն ավելի մեծ հեռահարություն և արկերի ավելի մեծ ուժ: Այդ հրանոթների քաշը բավականաչափ մեծ է, նրանց մեջ կան այնպիսիները, վորոնք հարմարեցված են միայն յերկաթուղիներով փոխադրելու համար:

Զորական հրետանին, վորը զորական միավորության մեջ է մտնում, բաժանվում է գնդային, դիվիզիական ու կորպուսային հրետանու: Դիվիզիական ու կորպուսային հրետանու կազմի մեջ մտնում են այնպիսի հրանոթներ, վորոնք հնարավորություն են տալիս հաջողությամբ կատարելու գնդային ու դիվիզիական հրետանու հիմնական խնդիրը, այն է հետևակի անմիջական մոտակա օգնությունը: Այդ պատճառով նրանց սպառազինման վրա գտնվում են գլխավորապես դաշտային թեթև արագաձիգ թնդանոթներ (76 մմ.) և հոբիցներ (122 մմ.), վորոնք դյուրաշարժ են և հեշտ են փոխադրվում դաշտային ճանապարհներով և առանց ճանապարհների: Թեթև հրետանուն վերաբերում է նաև գրաստային, լեռնային հրետանին, աջակցելու համար հետևակին լեռներում, հեծյալ հրետանին՝ աջակցելու համար հեծելազորին:

Կորպուսային հրետանու հիմնական խնդիրն է պայքարել հակառակորդի հրետանու դեմ, կրակ վարել հեռավոր տարածության վրա, ամրակոծել հակառակորդի թիկունքը և ավերել ամուր ծածկարանները, վորոնց չի կարող հաղթահարել դիվիզիական հրետանին: Այդ պատճառով կորպուսային հրետանին ունի արդեն ավելի հուժկու հրանոթներ, ինչպիսին է դաշտային ծանր արագաձիգ



թնդանոթը (107 մմ.) և դաշտային ծանր հոբիցը (152 մմ.): կորպուսային հրետանին անհրաժեշտության դեպքում ուժեղացնում է դիվիզիական հրետանուն:

Բացի գնդային, դիվիզիական ու կորպուսային հրետանուց, կան նաև հատուկ հուժկու հրետանու հարվածող խմբեր, վորոնք կոչվում են գլխավոր հրամանատարության ոժանդակի հրետանի: Այդ հրետանու կազմի մեջ մտնում են թե՛ զորական սիստեմի հրանոթներ, և թե՛ ավելի ուժգին հրանոթներ: Գլխավոր հրամանատարության ոժանդակի հրետանուն կից կան մի շարք հրետանու ոժանդակ աշխատանքի ծառայություններ ու ջոկատներ: Այդ հրետանին անհրաժեշտության դեպքում ուժեղացնում է և կորպուսները և առանձին գործող դիվիզիաները:

վորոնք են հրետանու հիմնական խնդիրները:
Ինչպես է հրետանին ոգնում հետևակին և ինչ է հե-
տևակի ու հրետանու միատեղ աշխատանքի գրավականը:
Ինչպե՞ս է իրագործվում կապը հրետանու և հետևակի
հետ մարտում:

## ԶՐԱՀԱՊԱՏ ՈՒԺԵՐ

Զրահապատ ուժերին պատկանում են զրահապատ գնացքները, զրահավտոները և տանկերը:

Զրահապատ ուժերը, մանավանդ տանկերը ներկայումս տարածվել են բոլոր բանակներում: Զրահապատ ուժերի խնդիրն է՝ աջակցել հետևակին ու հեծելազորի մարտական աշխատանքին, ուժեղացնելով նրանց կրակային կռիվը:

Զրահամեքենաները պատած են պողպատե զրահով, վորն անթափանց է սովորական գնդակների համար: Նրանք ունեն գնդացրեր ու հրանոթներ: Վորոշ պայմաններում այդպիսի զրահամեքենաները կարող են շատ մոտենալ հակառակորդին և ուժեղ հարված հասցնել նրան: Դրանումն է նրանց ուժը: Բայց նրանք ունեն մի շարք պակասություններ:

Զրահամեքենաները, անիվների վրա լինելով, կախում ունեն ճանապարհներից: Զրահագնացքը կարող է շարժվել միայն ճա-



6315—3

նապարհներով և այդպիսով ունի գործողությունների սահմանափակ շրջան։

Զրահագնացքները զինված են գնդացիրներով ու հրանոթներով։ Հրանոթներով ու գնդացիրներով պտտվող աշտարակները հնարավորություն են տալիս կրակ վարելու զանազան ուղղություններով բաց ու ծածկված դիրքերի դեմ։

Նայած իրենց հատկություններին ու յերկաթուղիներին զրահագնացքները գործադրվում են աջակցելու համար զորքերին նրանց հարձակման ու պաշտպանության ժամանակ, պահպանելու համար յերկաթուղիները, մանավանդ յերկաթուղային կարևոր հանգույցները, արշավելու համար թշնամու թիկունքը, պաշտպանելու համար յերկաթուղիները վերանորոգելու և փչացնելու աշխատանքները։



Զրահագնացքների դեմ պայքարը կատարվում է կենտրոնացրած հրետանական ու ռմբակոծման միջոցով. փչացնում են յերկաթուղիների գծերը, ռելսերի տակ ֆուգասներ են դնում, վորոնք պայթում են զրահագնացքն անցնելու ժամանակ. սարքում են ամեն տեսակ խափանումներ զրահագնացքի շարժման դեմ. նետում են սավառնակներից ռումբեր և այլն։

Զրահավտոմոբիլները ծածկված են գնդակների ու արկի կտորների (բեկորների) համար անխոցելի զրահով։ Սովորաբար զրահավտոմոբիլները զինված են լինում 2 կամ յերեք գնդացիրներով, իսկ յերբեմն նաև թեթև թնդանոթային թեթև հրանոթներով։ Գնդացիրներն ու հրանոթները տեղավորվում են հատուկ պտտվող զրահապատ աշտարակներում։ Զրահավտոմոբիլների միջին արագությունը լավ ճանապարհներով մի ժամում մինչև 30



կիլոմետր է։ Հատուկ հարմարանքների ոգնությամբ մի քանի զրահավտոմոբիլներ կարող են շարժվել նաև առանց ճանապարհների, ձյունի վրայով, յերբեմն կարող են անցնել նաև փոքրիկ գետեր (վեցակնանի կամ թրթուրաձև հատոցներով զրահավտոմոբիլներ)։

Զրահավտոմոբիլները շնորհիվ իրենց դյուրաշարժության կարող են արագ յերևալ մարտում և մեծ աջակցություն ցույց տալ հետևակին նրա մարտական աշխատանքում։ Զրահապատներն ոգտագործվում են նաև ուժեղացնելու համար հեծելազորի գործողությունները, հետապնդելու համար նահանջող հակառակորդին կամ պաշտպանելու համար նրան հակառակորդի հարձակումից, պաշտպանելու համար կարևոր կետերը և այլն։ Զրահապատների դեմ պայքարը կատարվում է հրետանական ռմբակոծումով, զրահահար գնդակներով կամ նռնակներով, վորոնք նետվում են զրահապատի տակ։ Սարքվում են նաև զանազան խոչընդոտներ, փոսեր, թակարդներ, ֆուգասներ և այլն։

Տանկերը, վորոնք արդեն մեծ գործադրություն ստացան համաշխարհային պատերազմում, ժամանակակից մարտում ներկայացնում են իրենցից կռվի հուժկու միջոց։ Տանկերը շարժվում են թրթուրաձև հատոցով, վորը հնարավորություն է տալիս նրանց շարժվելու ճանապարհներից դուրս, կակուղ գետնի վրայով և հաղթահարելու խոչընդոտները,—առուներ, փոսեր և այլն։ Իրենց կառուցվածքով լինում են զանազան տիպի տանկեր,—թեթև, միջին ու ծանր տանկեր ու փոքր տանկետկաներ։ Տանկետկաները կոչված են հետախուզության և հետևակի ու հեծելազորի հետ միասին գործելու համար։ Տանկերը ծածկված են զրահով, վորը պաշտպանում է նրանց սովորական գնդակներից։ Կա նաև զրահ, վորը պաշտպանում է զրահահար գնդակներից։

Իրենց հատկություններով տանկերը կարող են ազատ շարժվել նաև կտրտուկ (խորտուբորդ) տեղանքով, անցնել սաղր գետակներով, հուներով, փոսերով, բարձրանալ լանջերով, ջարդել ճանապարհին յեղած բարակ ծառերը, հաղթահարել վոչ բարդ ուղղաձիգ խոչընդոտներ, լարափակոցներ։

Տանկերի շարժման արագությունը տարբեր է, նայած նրանց ուժին և տեղանքին։ Փոքր տանկերը, տանկետկաները, հատուկ հարմարեցրած անիվների ոգնությամբ կարող են ճանապարհով շարժվել մի ժամում մինչև 50 կիլոմետր արագությամբ, առանց ճանապարհների տեղանքով՝ մի ժամում մինչև 20 կիլոմետր արա-

դությամբ։ Ծանր տանկերը շարժվում են դանդաղ մի ժամում մինչև 4-ից—12 կիլոմետր արագությամբ զանազան տեղանքով։ Տանկերը զինված են սովորաբար 1—2 թնդանոթային հրանոթներով և մի քանի գնդացիրներով, վորոնք տեղավորված են զրահապատ աշտարակներում։

Տանկերի խնդիրն է աջակցություն ցույց տալ հետևակին նրա մարտական աշխատանքում։ Տանկերը զգալիորեն ուժեղացնում են հետևակի մարտական կորովը։ Տանկերը գործադրվում են ճեղքելու համար լարափակոցները, ամրացրած գծերը, տանկերը ոչնչացնում են հակառակորդի հենակետերը, նրա գնդացրային բներն ու մարտկոցները։ Տանկերը կարող են ճեղքել գծերը և անցնել թիկունքը, մեծ հարված հասցնելով հակառակորդին։ Արագաշարժ տանկերն օգնում են նաև հեծելազորի մարտական աշխատանքին և գործում են մոտորացված զորամասերի հետ։

Իր անակնկալ յերևալով տանկը խուճապ է ստեղծում հակառակորդի շարքերում և ճնշում է նրա դիմադրության ուժը։ Բայց տանկերը, խոշոր դեր խաղալով հակառակորդի ամրացրած գծերի ճեղքման մեջ, ոչնչացնելով նրա հենակետերը, ճնշելով հակառակորդին, ի վիճակի չեն իրենց ձեռքում պահելու գրաված գծերը։ Յեվ միայն տանկերի յետևից յեկող հետևակը կարող է այդ անել։ Տանկերը հարթում են հետևակի ճանապարհը, օգնում են հետևակին կատարելու նրա վրա դրած մարտական բարդ խնդիրները։

Մեր կանոնադիրքն ասում է, վոր տանկերի դեմ պայքար մղելիս, նախքան նրանց հետևակի դասավորության մեջ մտնելը, հարկավոր է կրակով, գլխավորապես՝ հաստոցավոր գնդացրերի կրակով, անջատել տանկերը նրան հետևող հետևակից, կասեցնելով այդպիսով տանկերին հետևող հետևակի առաջխաղացումը։ Յերբ տանկերն անցել են հետևակի դասավորության մեջ, հետևակի առաջին շարանները պետք է ձգտեն աննկատելի մնալ տանկերի կողմից, և բաց թողնեն տանկերին իրենց մոտից։ Իսկ ամբողջ ուշադրությունը պետք է դարձնել հակառակորդի այն հետևակի ոչնչացման վրա, վոր գալիս է տանկերի յետևից։ Իսկ ներխուժած տանկերի դեմ կռվում են հետևակի հաջորդ շարանները և հրետանին։

Կռիվը տանկերի դեմ հաջողությամբ կատարվում է հրետանական կրակով, տանկի տակ նետած նռնակներով։ Կան նաև հատուկ թեթև հակատանկային հրանոթներ։ Տանկը ծակում անցնում են նաև զրահահար գնդակները, վորոնց արդյունք է տալիս նաև հրաձգությունը հրացաններով ու գնդացրերով, ինչպես նաև տանկի մարտանատներին ուղղված հրանետերի կրակը։ Բացի դրանից պատրաստում են մեծ ծածկված փոսեր, ֆուգասներ ու ականային դաշտեր՝ պայթեցնելու համար տանկերը նրանց հնարավոր շարժման ճանապարհին։ Տանկերի կրակը գործոն է մինչև 400 մետրի վրա։ Յերբ մոտենալու լինենք տանկերին 20–25 մետրի վրա, այն ժամանակ նրա գնդացրային կրակն արդեն վտանգավոր չէ, վորովհետև խփում է գլխավերևից։ Յեվ այն ժամանակ կարելի յե տանկի տակ նռնակներ նետել, պայթեցնել նրա թրթուրաձև հաստոցները և շարքից հանել նրան։

Ինչպիսի հատկություններ ունեն զրահապատ ուժերը և վորոնք են նրանց խնդիրները։

Ինչպես են տանկերն օգնում հետևակի մարտական աշխատանքին։

## ՕԴԱՅԻՆ ՏՈՐՄԻՂ

Հսկայական է ավիացիայի դերը պատերազմում։ Համաշխարհային պատերազմից հետո ավիացիայում տեղի ունեցած կատարելագործումները զգալիորեն ուժեղացրել են ավիացիայի մարտական կորովն ու գործողությունների բնույթը։ Ավիացիան կարող է կատարել նաև ինքնուրույն մարտական խնդիրներ, սակայն ավիացիայի ամենագլխավոր, հիմնական խնդիրն է՝ աջակցել ցամաքային զորքերին նրանց մարտական աշխատանքում։ Մեծ է այն օգնությունը, վոր ավիացիան ցույց է տալիս ցամաքային զորքերին։

Ավիացիան հետախուզում է հակառակորդին, պարզում է նրա դասավորությունը, շարժումը և զեկուցում է այդ մասին հրամանատարությանը։ Ավիացիան կատարում է զանազան պատվերներ կապի վերաբերյալ։ Նա դիտում է մարտադաշտին և հաղորդում է զորամասի հրամանատարությանը մարտի արդյունքների մասին, մարտադաշտում յեղած փոփոխությունների մասին։ Ավիացիան օգտագործվում է հարձակման ու պաշտպանության ժամանակ։ Հարձակվելով օդից հակառակորդի վրա, գնդակոծելով նրան, կամ

նրա վրա ռումբեր նետելով, ավիացիան օգնում է հետևակին առաջ շարժվելու, գրոհելու հակառակորդին կամ պաշտպանության ժամանակ յետ մղելու թշնամու գրոհները: Ավիացիան պաշտպանում է ցամաքային զորքերին հակառակորդի սավառնակների հարձակումից մարտի ժամանակ, հանգստի կամ յերթի միջոցին:

Այդպիսով ավիացիան հսկայական դեր է խաղում ժամանակակից մարտում ցամաքային զորքերին ցույց տված իր օգնությամբ: Բայց ավիացիայի օգնությունը, ինչպես և զորքերի մի այլ տեսակինը, հաջող է միայն այն դեպքում, յերբ կա ամուր, անընդհատ համագործակցություն և կապ կա: Սավառնակների հետ կապի համար սահմանվում են ավիազդանշանային պոստեր: Սավառնակը գետին է նետում ժապավեններով զեկուցագրեր: Նշանագրությունը գետնից կատարվում է հատուկ քաթանների օգնությամբ: Կապը սավառնակների ու գետնի միջև իրագործվում է նաև ռադիոյի օգնությամբ:

Օդային ապարատները լինում են օդից ծանր ու օդից թեթև: Օդից թեթև ապարատներին են պատկանում կապված օդապարիկները (աերոստատները) և դիրիժաբլները: Այդ ապարատները լցվում են ներսից թեթև հատուկ գազով և շնորհիվ դրան նրանք կարողանում են մնալ օդում:

Դիրիժաբլներն ունեն մոտորներ և կարող են շարժվել օդում: Դիրիժաբլներին ամրացվում է նավակ-գոնդոլներ, վորոնց մեջ տեղավորվում են մարդիկ, մոտորներ, հրանոթներ,: Դիրիժաբլները ունեն թեթև թնդանոթներ, գնդացրեր և օդային ռումբեր: Դիրիժաբլները կարող են մնալ օդում մի քանի օր ու գիշեր և մի ժամում անցնել 130 կիլոմետր: Դիրիժաբլներն օգտագործվում են փոխադրելու համար մարդկանց, զենք, պարեն, հատուկ դեպքերում՝ հեռավոր հետախուզությունների, հակառակորդի տերիտորիայի վրա ռումբեր նետելու համար:

Օդից ծանր ապարատները,—սավառնակները,— շարժվում են մոտորի օգնությամբ, վորը շարժման մեջ է դնում օդային պտուտակը,—պրոպելլերը: Այդ պտուտակը, պտտվելով կարծես մեխվում է օդի մեջ, ինչպես խցահանը և իր յետևից տանում է սավառնակը: Սավառնակները կարող են թռչել անցնել մեծ տարածություններ, մի ժամում անցնելով մինչև 250 կիլոմետր և ավելի: Սավառնակները լինում են տարբեր տեսակի, նայած այն մարտական խնդիրներին, վոր առաջադրվում են նրանց:

Հետախույզ-սավառնակները կարող են թռչել մի ժամում



մինչև 200 կիլոմետր և մնալ օդում մինչև 10 ժամ: Նրանք զինված են մի քանի գնդացրերով ու թեթև ռումբերով: Նրանք ունեն հատուկ լուսանկարչական ապարատներ (ֆոտո) մեծ բարձրությունից նկարելու համար: Ունեն նույնպես հարմարանքներ ռմբանետման համար:

Կործանիչ սավառնակները մեծ արագություն ունեն, վորը հասնում է մի ժամում մինչև 300 կիլոմետրի: Նրանք կարող են արագ շատ բարձրանալ կռվելու համար հակառակորդի սավառնակի դեմ: Նրանք զինված են գնդացրերով:

Ռմբակոծող-սավառնակները տարբերվում են մյուսներից իրենց մեծ չափերով, մոտորի ուժով և մեծ բեռնունակությամբ: Լինում են թեթև ու ծանր ռմբակոծողներ: Նրանք կարող են վերցնել 400-ից մինչև 2000 կիլոգրամ բեռ: Նրանք զինված են գնդացրերով ու տարբեր քաշի ռումբերով, վոր նրանք նետում են հակառակորդի դասավորության վրա կամ թիկունքում:

Գրոհային ավիացիան արագ յերևան է գալիս, իջնում հակառակորդի զորքերի վրա և փոքր բարձրություններից,—(մինչև 100 մետր և ավելի պակաս),—գնդացրերի կրակով ու ռումբերով մեծ կորուստներ է պատճառում հակառակորդի զորքերին:

Բայց ավիացիան ունի և իր թերությունները: Ամեն անգամ նա չի կարող գործել և կատարել իր մարտական խնդիրները: Մառախուղը, անձրևը, ձյունը դժվարացնում են ավիացիայի աշխատանքը: Ավիացիան իր աշխատանքի համար պահանջում է հատուկ սարքավորված հրապարակներ,—աերոդրոմներ, մարդկանց վարժեցրած կադր, վոր այնքան էլ հեշտ չէ արագ պատրաստել:

Սավառնակների դեմ պայքարելու համար բացի սովորական միջոցներից,—հրետանական, գնդացրային ու հրացանային գնդակոծում,—կան նաև հակասավառնակային հատուկ զենիթային թնդանոթներ ու գնդացրեր: Գիշերը գնդակոծի պատրաստելու կամ քողարկվելու համար կան հատուկ ապարատներ ձայնորսներ: Նույն նպատակով դնում են օդային դիտողության հատուկ պոստեր:

Սավառնակների դեմ գնդացրային կրակը գործոն է մինչև 1000 մետր բարձրության վրա, հրացաններով ու թեթև գնդացրերով՝ մինչև 500 մետր բարձրության վրա: Հրացաններով հրաձգությունը թույլատրվում է միայն ամբողջ ստորաբաժանումներով: Մինչև 1000 մետր ցածրացող սավառնակի դեմ պայքարի հաջողությունն ապահովվում է, յերբ խմբովին կրակ են վարում 4—6

գնդացիր: Իսկ 1000 մետրից ավելի բարձր թռչող սավառնակների դեմ հրաձգությունը վարում է զենիթային հրետանին:

Իր սավառնակը հակառակորդի սավառնակից տարբերել կարելի յե հատուկ ճանաչման նշաններով, վոր սովորաբար լինում են նրանց թևերի ներքին կողմերում, մարմնի ու պոչի վրա: Մեր սավառնակների ճանաչման նշանը կարմիր աստղն է:

Ինչպե՞ս է ավիացիան օգնում հետևակի ու հրետանու մարտական աշխատանքին:

Ինչպիսի մարտական սավառնակներ կան և ինչ խընդիրներ ունեն նրանք:

## ՔԻՄԻԱԿԱՆ ԶՈՐՔԵՐ

Կռվի քիմիական միջոցները համաշխարհային պատերազմում լայն գործադրություն ստացան: Պատերազմից հետո և ներկայումս էլ բոլոր յերկրներում ուժեղ աշխատանք են կատարում հընարելու համար նոր թունավոր նյութեր և հին թունավոր նյութերի պաշարներ պատրաստելու: Բոլոր բանակներում կան հատուկ քիմիական զորքեր, վորոնց սովորեցնում են քիմիական մարտ մղել:

Խորհրդային կառավարությունը հայտարարել է, վոր մեր դեմ հարձակման դեպքում Կարմիր բանակը քիմիական թունավոր նյութեր կգործադրի միայն այն ժամանակ, յերբ հակառակորդն առաջինը կգործադրի այն:

Քիմիական կռվի մեջ պատերազմում գործադրվող մարտական թունավոր նյութերի (կրճատ ԹՆ) խնդիրն է՝ հարվածել հակառակորդի կենդանի ուժին կամ դժվարացնել նրա մարտական գործունեյությունը: Քիմիական պաշտպանության խնդիրն է՝ պաշտպանել իր զորքերին, հանդերձանքը, պարենը, ԹՆ ազդեցությունից, խոչընդոտ հանդիսանալ հակառակորդին քիմիական հարձակում գործելու մեջ, արագ միջոցներ ձեռք առնել վոչնչացնելու համար հակառակորդի քիմիական հարձակման հետևանքները:

Թունավոր նյութերը (ԹՆ) լինում են տարբեր և գործադըրվում են մարտում տարբեր ձևերով,—հեղուկ, կարծր և գազանման դրությամբ: Մարդու վրա ԹՆ տարբեր ազդեցություն են



գործում: Թունավոր նյութերից մի քանիսն առաջացնում են շընչահեղձություն, մյուսները՝ առաջ են բերում սաստիկ արտասվահոսություն, սուր ցավեր աչքերում կամ խիստ գրգռում են քիթն ու կոկորդը և առաջացնում են փռշտոց, փսխոց, ինչպես նաև որգանիզմի ընդհանուր թունավորում: Կան այնպիսի ԹՆ, վորոնք անմիջապես, կամ մի վորոշ ժամանակից հետո մահ են պատճառում: Մի այլ տեսակի ԹՆ, վորոնք կոչվում են պալարական, գործելով կաշվի վրա, առաջ են բերում այրվածքներ և թարախակալ վերքեր կաշվի վրա:

Նայած ներգործության տևողության ու նրանց հատկություններին, ԹՆ բաժանվում են կայուն և անկայուն ԹՆ: Անկայուն ԹՆ արագ գոլորշիանում են օդում կամ քայքայվում են, կլանվում են հողի կողմից, և դադարում է նրանց վնասակար ներգործությունը: Կայուն ԹՆ, ընդհակառակը, յերկար ժամանակ մնում են վարակված տեղամասերում և յերկար ժամանակով պահպանում են իրենց թունավոր ուժը:

Տարբեր ԹՆ գործադրվում են նայած այն նպատակին, վոր հետապնդվում է: Այսպես օրինակ՝ կայուն ԹՆ,—«իպրիտով»,— կարելի յե վարակել տեղամասն անտառում, անտառակը, ձորը և այդ անանցնելի դարձնել զորքերի համար, վորովհետև, յերբ քամի չկա, իպրիտը յերկար մնում է վարակված տեղամասում և ներգործում է այդ տեղամասից անցնող մարդկանց ու կենդանիների վրա առաջացնելով պալարներ և ընդհանուր թունավորում: ԹՆ կարող են վարակել ջուրը ջրհորներում, լճերում ու գետերում:

Քիմիական պաշտպանություն կազմակերպելու համար ձեռք են առնվում մի շարք միջոցներ: Կազմակերպվում է հակառակորդի հետախուզություն, վորպեսզի տեղեկություններ ստացվեն քիմիական հարձակում գործելու նրա մտադրությունների մասին: Ուսումնասիրվում է այն տեղանքը, վորտեղից ամենից շատ կարելի յե սպասել քիմիական հարձակում: Դիտում են յեղանակը, աշխատում են զորքերի գործողություններով խանգարել հակառակորդի քիմիական հարձակումը: Դրվում են քիմիական հատուկ պոստեր, վորոնք պետք է զգուշացնեն սկսված քիմիական հարձակման մասին: Պատրաստվում են հատուկ ապաստարաններ, ուր չեն կարող թափանցել քիմիական նյութերը: Մարտիկներն ունեն իրենց հետ հակագազեր, իսկ անհրաժեշտ դեպքերում տրվում է նաև քիմիական հագուստ: Կան հատուկ հակագազեր ձիերի համար:

Քիմիական հարձակումից հետո կամ շարժման ճանապարհին հակառակորդի թունավորած տեղանքը անվնաս են դարձնում հատուկ նյութերով: Դա կոչվում է տեղանքի դազաթազերծում:

[redacted]

Ի՞նչ խնդիրներ ունեն քիմիական զորքերը:

## ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԶՈՐՔԵՐ

Դա մասնագիտական զորքեր են, որոնց նպատակն է հատուկ տեխնիկական միջոցներով և աշխատանքներով աջակցել զորքերի հիմնական տեսակներին՝ հետևակին, հեծելազորին, հրետանուն,— նրանց առաջադրած մարտական խնդիրների կատարման մեջ: Ճարտարագիտական զորքերին պատկանում են սակրավորական, քողարկու, կամրջանավային, էլեկտրատեխնիկական, հիդրոտեխնիկական, շինարարական զորամասեր և ճարտարագիտական կրանքներ:

Ճարտարագիտական զորքերը կազմակերպում են զանազան խոչընդոտներ հակառակորդի շարժման ճանապարհին: Նրանք ուժեղացնում են իրենց զորքերի դասավորությունը, կազմակերպելով ամուր ծածկարաններ, սարքավորում են թիկունքը, պատրաստում են ականային դաշտեր, Փուգասներ: Ճարտարագիտական զորքերը կազմակերպում են հատուկ աշխատանքներ զորքերի ու տեղանքի քողարկման համար, կազմակերպում են լուսավորություն և լարափակոցների էլեկտրականացում, պայթեցնում են անհրաժեշտության դեպքում կամուրջներ, փչացնում են ճանապարհներ և այլն:

Ճարտարագիտական զորքերը հարձակման ժամանակ վերացնում են զորքերի շարժման ճանապարհին յեղած խոչընդոտները, շտկում են ճանապարհները, կամուրջները, պատրաստում են գետանցներ և այլն: Այդպիսով ճարտարագիտական զորքերը, որոնք ունեն զանազան տեխնիկական միջոցներ, օգնում են զորքերի հիմնական տեսակներին կատարել իրենց մարտական խնդիրները:

[redacted]

Ինչպիսի՞ դեր են խաղում ճարտարագիտական զորքերը բանակում:



## ԿԱՊԻ ԶՈՐՔԵՐ

Կապի ծառայությունը մարտում ունի բացառիկ նշանակություն: Առանց կարգավորված, յուրաքանչյուր պարագայում լավ և արագ աշխատող կապի, տարբեր զորամասերի միջև, պետի ու ստորադրյալների միջև, պետի ու մարտիկների միջև, չի կարող հաջողությամբ կատարվել մարտական խնդիրը: Լավ կարգավորված կապը զորքերի զանազան տեսակների ու զորամասերի համագործակցության համար կարևորագույն պայմանն է հանդիսանում: Առանց լավ կապի չի կարող լինել զանազան զորամասերի ու զորքերի զանազան տեսակների համաձայնեցրած գործողություններ, ժամանակին փոխադարձ օգնություն, ուստի չի կարող լինել և հաղթանակ:

Կապը մարտում իրագործվում է սովորական միջոցներով,— անձնական շփումով, լրատարներով, ինչպես և տեխնիկական միջոցներով,— հեռախոսով, հեռագրով, ռադիոյով, ձայնական և լուսատու ազդանշաններով և այլն: Օգտագործվում է նաև ազդանիշների փոստն ու շներով կապը:

Զորամասերում պաշտոնեական կապի կազմակերպման ու ղեկավարության համար կան զորամասերում կապի հատուկ մասեր: Կապի մասերն ապահովում են կապի կանոնավորումն ու զորքերի ղեկավարությունը: Կապի մասերն իրենց հետ կրում են կապի հատուկ միջոցներ,— ապարատներ, հեռախոսաթել և այլն, որոնցով զորամասերի պետերի ցուցումներով կապ են հաստատում զորամասերի ու ստորադրյալների միջև: Կապի զորամասերը հետևում են նաև կապի սարքին գործողությանը:

[redacted]

Ինչպիսի դեր են կատարում կապի զորքերը բանակում:

---

Բացի զորքերի վերոհիշյալ տեսակներից կան մի շարք օժանդակ զորքեր, որոնք սպասարկում են զորքերի հիմնական տեսակների մարտական աշխատանքին: Դրան պատկանում են՝ յերկաթուղային զորքերը, սանիտարական մասերը, հանգրվանային (տրանսպորտային) մասերը, ավտոմոբիլային մասերը, դումակները, կրանքները և այլն:

Զորամասերի շտաբների պարտականությունների վրա ընկնում է նաև թիկունքի կազմակերպումը: Թիկունքի կազմակերպումը նախատեսում է՝ զորքերի ժամանակին ու մշտական հայթայթումը մարտական ու պարենավորման պաշարներում, զենքով, հագուստեղենով, զորամասերի լրացումը մարդկանցով, ձիերով, զորամասերից հիվանդներին, վիրավորներին փոխադրելը, կարգի վրա հսկելը թիկունքում, հաղորդակցության ճանապարհների, կապի պահպանումը և այլն:



«Մարատ» տիպի գծային նավ:

## ԿԱՐՄԻՐ ՆԱՎԱՏՈՐՄ

Մեր Միությունը չորս կողմից վողողվում է ծովերով:

Մեր թշնամիները մեծ նավատորմներ ունեն և կարող են հարձակվել մեզ վրա, ավերել մեր մերձափնյա քաղաքները, նավահանգիստները, զորքերի դեսանտներ (ջոկատներ) ափ իջեցնել և կորել ամբողջ ռայոններ: Այդ պատճառով մենք էլ պետք է ունենանք մեր նավատորմը պահպանելու համար մեր նավակայաններն ու ծովային սահմանները:

Ծովային նավատորմը նշանակություն ունի վոչ միայն մեր սահմանների պաշտպանության համար, այլև մեր ծովային առևտրի համար: Յեվրոպայի և Ամերիկայի յերկրները գնացող



մեր բեռների 90 տոկոսը փոխադրվում է ծովային ճանապարհով: Այդ և աժան է և հարմար:

Մեր ծովային նավատորմը մեծ դեր խաղաց հեղափոխական շարժման մեջ: Այսպես, որինակ՝ 1905 թվին շատ ռազմանավերի վրա ապստամբություններ յեղան: Նավաստիները յեռանդուն մասնակցություն ցույց տվեցին նաև Հոկտեմբերյան հեղափոխությանը: Բանվորական Կարմիր գվարդիայի հետ, զինվորների հեղափոխական մասերի հետ միասին նավաստիները կռվում էյին Պետրոգրադի փողոցներում Հոկտեմբերյան ապստամբության որերին, յետ էյին մղում գեներալներին, վորոնք գրոհում էյին յերիտասարդ խորհրդային իշխանության դեմ: Հոկտեմբերյան որերին մեծ դեր խաղաց «Ավրորա» հածանավը, վորն ոգնություն ցույց տվեց Պետրոգրադի ապստամբ բանվորներին:



«Ավրորա» հածանավը, վորը Հոկտեմբերյան Հեղափոխության ժամանակ խոշոր ոգնություն ցույց տվեց Պետրոգրադի բանվորներին, աջակցելով նրանց:

Քաղաքացիական պատերազմի ժամանակ նավաստիների լավագույն մասը հերոսաբար կռվում էր Կարմիր Գվարդիայի ու Կարմիր բանակի շարքերում, վորովհետև մեր նավերը մեծ մասամբ, վառելանյութի բացակայության պատճառով, ստիպված էյին անգործ մնալ: Մեր նավերի մի մասը տաքել և ջրում խորտակել էյին սպիտակ գվարդիականները:

Քաղաքացիական պատերազմում մեծ դեր խաղացին գետա-

յին նավատորմները։ Ներքին ջրային ճանապարհներում, գետերի վրա, գործելով Կարմիր բանակի հետ միասին, նրանք հսկայական օգնություն ցույց տվեցին։

Քաղաքացիական պատերազմից հետո մենք ուժեղ թափով սկսեցինք վերականգնել և ամրացնել մեր նավատորմը։ Վերանորոգվում էին հներն ու կառուցվում էին նոր նավեր։ Նավատորմում ծառայելու մտան հազարավոր աշխատավոր երիտասարդներ։

Համամիութենական Լենինյան Կոմունիստական Երիտասարդության Միությունը 1922 թվին ընդունեց նավատորմի շեֆությունը, և ամեն տարի հազարավոր կոմերիտականներ մտնում են կարմիր նավատորմայինների շարքերը։

Մեր նավատորմն արագ ամրացավ և այժմ իրենից ներկայացնում է հուժկու ուժ։

Նավատորմը կարող է ինքնուրույն մարտեր մղել հակառակորդի նավատորմի դեմ, սակայն նավատորմը հսկայական նշանակություն ունի նաև ծովափին Կարմիր բանակի հետ միասնեղ գործողությունների համար։ Գետային նավատորմը կարող է գործել Կարմիր բանակի զորամասերի հետ նավարկելի գետերի ռայոններում։ Այսպես, օրինակ՝ նորերս Ամուրյան նավատորմը հսկայական դեր խաղաց Հեռավոր Արևելքում, երբ Կարմիր բանակը յետ էր մղում սպիտակ չինացիների հարձակումը։ Այդ գործողությունների համար Ամուրյան նավատորմը պարգևատրվել է Խորհրդային կառավարության կողմից Կարմիր դրոշի շքանշանով։ Ծովային նավատորմը ներկայումս հայթայթվում է կռվի նորագույն տեխնիկական միջոցներով, կատարելագործված հրանոթներով, զենիթային հրետանիով։ Ծովային նավատորմը սպասարկում են ծովային հատուկ սավառնակներ (հիդրոպլաններ), վորոնք ընդունակ են իջնելու ջրի վրա։ Ժամանակակից տեխնիկան դարձնում է ծովային նավատորմը մեր ծովային սահմանների է՛լ ավելի հուժկու, հզոր ու հավատարիմ պաշտպանը։

Ինչ նշանակություն ունի ծովային նավատորմը ԽՍՀՄ պաշտպանության գործում։

Ինչպիսի՞ դեր է խաղացել նավատորմը հեղափոխական շարժման մեջ և քաղաքացիական պատերազմում։

Ինչպիսի՞ ռազմանավեր կան և վորն է նրանց նշանակումը։



# ԻՆՉՊԵՍ Է ՂԵԿԱՎԱՐՎՈՒՄ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ

## ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄՆ ՈՒ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Կարմիր բանակում հաշվվում է 562 հազ. մարդ։ Վորպեսզի հարմաձայնեցված և միասնական ընդհանուր խնդիր կատարել, հաջողությամբ սովորել և կռվել, հարկավոր է հատուկ կարգ բանակի կառուցման և զորական ծառայողների մի մասը մյուսին յենթարկելու գործում։ Յուրաքանչյուր զորական ծառայողի համար ամբողջովին վեր առած վարքի և գործողության այդ տեառանձին, առանձին զորամասերի, զորքի տեսակների և բանակի մարդկանց այդ բազմությունը գործել կարողանա, համաձայ-սակ խիստ և ճիշտ կարգ է սահմանված Կարմիր բանակի կանոհամար ամբողջովին վեր առած վարքի և գործողության այդ տենագրքերով։

կանոնագրքերը նախատեսում են Կարմիր բանակի բոլոր տեսակի զորքերի աշխատանքն և ծառայությունը, բոլոր զորական ծառայողների կյանքն և ծառայությունը։ Կան կանոնագրքեր, վորոնք ընդհանուր են ամբողջ բանակի համար, օրինակ՝ ներքին ծառայության կանոնագիրքը, կարգապահական կանոնագիրքը, և մանագիտական կանոնագրքեր— զորքի վորևէ տեսակի համար։ Այս կանոնագրքերի համապատասխան և կանոնագրքերով հրամատարներին վերապահված իրավունքների հիման վրա և բարձր հրամատարության հրամաններով՝ հրամատարները ղեկավարում են իրենց յենթակա զորամասերը, տորբաժանումները հրամանների և կարգադրությունների օգնությամբ։

Բանակը լավ ղեկավարելու, նրա ուսուցման հաջողության և մարտական գործողությունների համար, բանակը բաժանվում է զորամասերի և զորական միավորությունների։ Զորական միավորությունները կազմվում են զանազան տեսակի զորամասերից։ Այն տեսակ զորական միավորությունները, ինչպես գունդը, դիվիզիան, ունեն զորամասերի մշտական կազմ։

Անհրաժեշտության դեպքում զորական միավորություններին, ինչպես օրինակ գնդերին, կարող են ժամանակավորապես տրվել ելի այլ զորամասեր կամ ընդհակառակը— ժամանակավորապես գնդից վերցվել մի քանի զորամասեր։ Վորևէ մարտական խնդիր

կատարելու համար կարող են կազմվել ժամանակավոր միավորություններ: Յուրաքանչյուր ստորաբաժանում, զորամաս, զորական միավորություն ղեկավարում է հրամանատարը, որը ենթարկվում է բարձր զորամասի կամ միավորության հրամանատարին:

Հետևակում ստորին մարտական խմբակ հանդիսանում է ջոկը: Նրան գլխավորում է հրամանատարը, որին ենթարկվում են ջոկի կարմիր բանակայինները:

Ջոկի հրամանատարը— դա բոլոր ջոկի կարմիր բանակայինների անմիջական, մերձավոր, ուղղակի պետն է: Ջոկի հրամանատարը յենթարկվում է դասակի հրամանատարին, դասակի հրամանատարը յենթարկվում է վաշտի հրամանատարին, վաշտի հրամանատարը յենթարկվում է գումարտակի հրամանատարին, գումարտակի հրամանատարը յենթարկվում է գնդի հրամանատարին և այլն:

## ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿՈՒՄ

Մեր կարգապահության հիմքում դրված է կարմիր բանակային մասսայի դասակարգային համախմբվածությունն ու գիտակցականությունը: Դրա համար էլ Կարմիր բանակն ամուր է իր յերկաթե գիտակցական կարգապահությամբ: Խանգարելով կարգապահությունը, կարմիր բանակայինը վնասում է Կարմիր բանակին, թուլացնում է նրան, վնաս է հասցնում բանվոր դասակարգի և ամբողջ աշխատավորության շահերին:

Յուրաքանչյուր գործում, զավոդում, գործարանում, յուրաքանչյուր տնտեսությունում հարկավոր է որոշ կարգ: Յերբ սահմանված կարգը ճշտությամբ կատարվում է, գործը հաջող է գնում: Ի՞նչ կլիներ գործարանում, յեթե բանվորներն և ծառայողները չկատարեյին այն, ինչ որ իրենք պետք է անեյին: Արդյոք կարո՞ղ է այդ տեսակ գործարանն ինչպես հարկավոր է աշխատել, ապրանք արտադրել: Իհարկե ոչ:

Բանակում էլ ավելի խիստ, ճիշտ կարգ է պետք:

Ժամանակակից պատերազմը, մարտը պահանջում է յուրաքանչյուր մասնակցողից գործողությունների հատուկ ճշտություն, պարզություն, արագություն, համաձայնություն: Առանց դրան բանակը չի կարող հաղթել: Բանակում զորական ծառայողների կողմից սահմանված պարտականություններն ու կարգը, պետի հրամանները չկատարելը կարող է բանակը քայքայման, մարդկանց տանջանքներով, հարյուրներով և հազարներով կորստյան հասցնել:



Ասենք, կարմիր բանակայինը կարգադրություն է ստանում ուղևորվել հարևան զորամաս և զորամասի հրամանատարին հանձնել զեկուցում: Կարմիր բանակայինը չի կատարում այդ կարգադրությունն անմիջապես և ուշանում է մի քանի ժամ: Իսկ դրա հետևանքն այն է լինում, որ զորամասը, չիմանալով, որ իրեն վրա գալիս է հակառակորդը, ջարդուփշուր կլինի: Կամ թե չէ կարմիր բանակայինը կանգնել է պոստի վառոդի նկուղի մոտ և խանգարում է սահմանված կանոնները—ննջում է: Իսկ այդ ժամանակ չարագործները պայթեցնում են նկուղը—ոչնչացավ բանակի համար շատ անհրաժեշտ մարտական մթերք և մարդիկ:

Կարելի յե արդյո՞ք հաջողությամբ ուսուցանել և դաստիարակել բանակը, յեթե նրանում խիստ կարգ չլինի: Իհարկե ոչ: Յեթե որ յուրաքանչյուրն աներ այն, ինչ որ նա յե կամենում կամ հաճելի յե, բանակը կքայքայվեր: Այդ տեսակ բանակը մեր թշնամիները կջարդեյին անմիջապես: Հասկանալի յե, թե ինչո՞ւ բանակում պահանջվում է առանձին խիստ կարգ և նրա ճիշտ կատարումը, այսինքն զինվորական կարգապահություն:

«1. Զինվորական կարգապահությունը,— ասում է մեր կանոնագիրքը,— է կարգի ճիշտ պահպանումը, որը սահմանված է բանվոր-գյուղացիական Կարմիր բանակի օրենքներով և կանոնագրքերով և պահվում է պետերի հրամաններով և կարգադրություններով:

2. Զինվորական կարգապահությունը նպատակ ունի յուրաքանչյուր զորական ծառայողի մեջ մշակել տոկունություն, կամքի ուժեղություն, հնարագիտություն, բանիմացություն, սովորություն ունենալ տանելու մարտական կյանքի դրկվածությունն ու ծանրությունը, բարեխղճություն և ինքնազոհության ընդունակություն:

3. Զինվորական կարգապահությունը պահանջում է բոլոր զինվորական ծառայողներից գիտակցաբար յուրացնելու և ճիշտ կատարելու կանոնագրքերը, ամբողջովին և մշտապես յենթարկվել պետերին, առանց առարկելու կատարել նրանց հրամաններն և պահպանել ռազմական գաղտնիքները»:

Զինվորական կարգապահությունը խանգարել ոչ ոքի չի թույլատրվում: Զինվորական կարգապահությունը խանգարելիս

յուրաքանչյուր զինվորական ծառայող յենթարկվում է խիստ պատժի:

Ինչո՞ւ բանակում խիստ կարգ է պետք:

Ինչի՞ վրա յե հիմնված կարգապահությունը Կարմիր բանակում:

Զինվորական կարգապահության ինչպիսի՞ պահանջներ ունի կարմիր բանակայինից:

## ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿՈՒՄ

*Կարգապահությունը խանգարողի վրա Կարմիր բանակում դրվում է կարգապահական պատիժ: Պատիժները տարբեր են լինում, նայած Կարմիր բանակի համար զանցանքի բնույթին և վնասաբերությանը:*

*Այն զանցանքը, վոր զինվորական ծառայողը կատարել է անփորձությամբ, անգիտակցաբար, կամ հանդիսանում է լոկ զանցառում ծառայության ընթացքում և չար բնույթ չի կրում, չի հետևել շահախնդրական նպատակի, կոչվում է կարգապահական զանցանք: Այդ տեսակ զանցանքների համար զինվորական ծառայողը պատժվում է անմիջապես իր մերձավոր պետի կողմից:*

*Կարգապահական պատիժները կարող են լինել զանազան կարգի նայած զանցանքին. կարող է լինել նախազգուշացում, հանդիմանություն, նույնպես և պահանոցում բանտարկության պետի կարգադրությամբ:*

Կարգապահական պատիժները հանդիսանում են դաստիարակչական և զինվորական ծառայողի վրա ներգործելու միջոց: *Նրանք նպատակ ունեն զինվորական ծառայողին վարժեցնել ճիշտ, գիտակցաբար կատարելու կարգապահությունն և սահմանված կանոնները: Յեթե պետն ապօրինի կերպով կարգապահական պատիժ է դրել կամ թույլ է տվել վորևէ աղավաղում պատիժներ դնելիս, կամ թույլ է տվել այնպիսի պատիժներ, վորոնք նվաստացնում են զինվորական ծառայողի արժանապատվությունը, այդ դեպքում այդպիսի պետերի վերաբերմամբ կիրառվում են պատժի ամենախիստ միջոցներ մինչև նրանց դատի տալը ներառյալ:*

*Զինվորական ծառայողների այն զանցանքները, վորոնք կրում*



*են չարամիտ, հակահեղափոխական բնույթ, կամ հանդիսանում են զինվորական կարգապահության լուրջ խանգարումներ, վորոնք Կարմիր բանակի անվտանգությանը մեծ վնաս են հասցնում, կոչվում են զինվորական հանցանքներ: Այդ տեսակ հանցանքների կարգին են պատկանում ինքնակամ բացակայելը, դասալքությունը, պետական գույքի հափշտակումն ու վաճառքը, պետի հրամանի չկատարելը, պետին կամ կարմիր բանակայինին վիրավորանք և բռնություն հասցնելը, պահակային կամ ուղեկցախմբային ծառայության կանոնագրքերի խախտումը, ինքնակամ գործողություններ, զինվորական գաղտնիքի տարածելը, դավաճանությունը, լրտեսությունը, բռնությունը, ավազակություն և հինահարություն (մարադյորություն) բնակչության մեջ և զինվորական ծառայողների այդ տեսակ այլ գործողություններ, վորոնք վիժեցնում են Կարմիր բանակի մարտունակությունը: Այդ տեսակ հանցանքներ կատարող մեղավորներն անմիջապես հանձնվում են Հեղափոխական տրիբունալի դատարանին և յենթարկվում են խիստ պատիժների— տևական բանտարկությունից սկսած մինչև գնդակահարությունը:*

*Մեր կանոնագիրքը պահանջում է յուրաքանչյուր հրամանատարից, վորպեսզի վերջինս հետևի, վոր իրեն յենթակա զինվորական ծառայողները ճիշտ պահպանեն զինվորական կարգապահության բոլոր կանոնները: Զինվորական կարգապահության սահմանված կանոնները բոլոր խանգարողներին Կարմիր բանակի շարքերում նրանց մերձավոր պետը* պատրավոր է *պատժել: Յեթե նա այդ բանը չանի,* ինքը պետը խախտում է *Կարմիր բանակի շարքերում սահմանված կարգապահությունը, թույլ է տալիս այնպիսի հանցանքներ, վորոնք վիժեցնում են Կարմիր բանակի մարտունակությունը: Այս բոլորի համար պետը պատասխանատու է: Մարտական պարագայում մեր կանոնագիրքը խիստ պարտավորեցնում է հրամանատարին մարտական հրամանը չկատարողներին այն դեպքում, յեթե դա յետաձգելու հնար չկա, կիրառել զինված հարկադրանք:*

«ՈՎ ԱՄԲՈՂՋՈՎԻՆ ՅԵՎ ՊԱՐԶԱՊԵՍ ՉԻ ՈԳՆՈՒՄ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻՆ,— ԱՍՈՒՄ Է ԼԵՆԻՆԸ,— ՉԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ ԱՄԲՈՂՋ ՈՒԺՈՎ ԿԱՐԳ ՅԵՎ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՆԱ ՄԱՏՆԻՉ Է ՅԵՎ ԴԱՎԱՃԱՆ:

Ինչի՞ համար և ո՞վ է կարգապահական պատիժներ տալիս:

## ԽՐԱԽՈՒՍԱՆՔՆԵՐ ՅԵՎ ՊԱՐԳԵՎՆԵՐ

*Արժանավոր ընկերների նկատմամբ, վորոնք գիտակցաբար և բարեխղճաբար կատարում են իրենց պարտականությունները և իրենց վարքով և աշխատանքով մյուսների համար օրինակ են հանդիսանում, հրամանատարները պետք է խրախուսանքի միջոցներ կիրառեն: Դրանով նշում են այն արժանիքները, վորոնք ունեն, ընկերները յերկրի և Կարմիր բանակի պաշտպանունակության ամրացման գործում:*

*Յուրաքանչյուր զինվորական ծառայող կարող է իր ակտիվ և ջանասեր գործունեությամբ, Կարմիր բանակում և ԽՍՀՄ-ում կատարած իր արժանիքներով ստանալ սահմանված խրախուսանքները և պարգևները: Խրախուսանքի տեսակներն են՝ զորամասին տված հրամանով շնորհակալություն, արժեքավոր նվերներով պարգևատրելը, Կարմիր աստղի և Կարմիր դրոշի շքանշաններով և ուրիշ պատվավոր ռազմական նշաններով պարգևատրելը:*

*Շքանշանները զինվորական ծառայողներին տրվում են մեծ մարտական արժանիքների, քաջության և հերոսական քաջագործության համար և խաղաղ և պատերազմի ժամանակ ԽՍՀՄ պաշտպանության հանդեպ ցուցաբերած առանձնահատուկ արժանիքների համար: ԽՍՀՄ շքանշաններով պարգևատրվածներն օգտվում են հատուկ իրավունքներով և առավելություններով, վոր սահմանված է օրենքով:*

Ի՞նչպիսի խրախուսանքներ և պարգևներ կան Կարմիր բանակում և ի՞նչ է նրանց նպատակը:

## ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԸ ՊԵՏՔ Է ԿԱՐԳԱՊԱՀ ՄԱՐՏԻԿ ԼԻՆԻ

*Յուրաքանչյուր կարմիր բանակային պետք է հասկանա, վոր յեթե չլինի խիստ զինվորական կարգապահություն, ճիշտ կարգ և ամեն մի զինվորական ծառայող բարեխղճաբար, գիտակցաբար չկատարի իր պարտականությունները, այդ դեպքում մարտունակ բանակ չի լինի: Պարզելով իրեն համար այդ ամենը, կարմիր բանակայինը պետք է վոչ միայն ինքն իր պարտականությունները կատարի ճշտությամբ և բարեխղճաբար, այլև իր ընկերներին յետ պահի կարգապահությունը խանգարելուց, անբարեխիղճ գործողություններից և զանցանքներից, ցույց տալով նրանց վնասակարությունը Կարմիր բանակի մարտունակության համար:*

*Կարմիր բանակայինն առանձնապես վճռական կերպով պետք է կռվի կարգապահական խանգարումների ամեն տեսակ խմբական փորձերի դեմ, հրաման չկատարելու, կամ խմբական կոլեկտիվ հայտարարություններ գանգատներով և բողոքներով տալու դեմ: Սահմանված կանոնների այդ տեսակ խմբական խանգարումները կամ հանդես գալը հանդիսանում են ամենածանր հանցանք Խորհրդային իշխանության հանդեպ: Կարգապահական այդ տեսակ խմբական խանգարումների մասնակիցների նկատմամբ կիրառվում են* ամենախիստ պատժի միջոցներ:

*Ամեն մի կարմիր բանակային պետք է ձգտի ուրիշների համար լինել կարգապահության օրինակ: Զինվորական ծառայողների դեպի բանակում սահմանված կարգի և դեպի իրենց պարտականությունների ունեցած այդ տեսակ գիտակցական վերաբերմունքի վրա է հիմնված մեր կարգապահությունը:*

Այդպիսով Կարմիր բանակի ղեկավարման հիմքում դրված է բանակի ամբողջ ապարատի ամենախիստ կենտրոնացումն և խիստ կարգապահությունը: *Յեթե այդպես չլիներ, մենք մարտունակ բանակ չէինք ունենա: Նա ի վիճակի չէր լինի հաջողությամբ կատարել մեր պետության կողմից նրա վրա դրված պրոլետարիատի դիկտատուրայի և սոցիալիստական շինարարության պաշտպանության խնդիրները:*

*Նա չէր կարողանա մեզ սպառնացող պատերազմում պաշտպանել մարտերում մեր յերկիրն իմպերիալիստների հարձակումներից, նրանց վրա հաղթանակ տանել: Մենք քաղաքացիական պատերազմի փորձից գիտենք, ինչպիսի վողբալի վախճան եյին ունենում մարտական գործողություններն այն զորամասերի համար, վորոնցում կարգապահությունն ընկած էր, կառավարելու խիստ կենտրոնացում չկար: Նրանք պարտություն կրեցին, հսկայական զոհեր տվեցին:*

«ՅԵԹԵ ՄՏԱԾԵՆՔ ԱՅՆ ՄԱՍԻՆ,—ԱՍՈՒՄ Է ԼԵՆԻՆԸ,—ԹԵ ԻՆՉ ԵՐ ԸՆԿԱԾ ՎԵՐՋԻՎԵՐՋՈ ԱՅՆ ԲԱՆԻ ԱՄԵՆԱԽՈՐԸ ՀԻՄՔՈՒՄ, ՎՈՐ ԱՅԴ ՏԵՍԱԿ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՐԱՇՔ ԿԱՏԱՐՎԵՑ, ՎՈՐ ԹՈՒՅԼ, ՈՒԺԱՍՊԱՌ, ՅԵՏԱԴԵՄ ՅԵՐԿԻՐԸ ՀԱՂԹԵՑ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱՈՒԺԵՂ ՅԵՐ-

ԿԸՐՆԵՐԻՆ, ՄԵՆՔ ՏԵՍՆՈՒՄ ԵՆՔ, ՎՈՐ ԴԱ—ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄԸ, ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՁԼՍՎԱԾ ԻՆՔՆԱԶՈՀՈՒԹՅՈՒՆՆ ԵՑԻՆ»:

Յուրաքանչյուր կարմիր բանակային պետք է անհողդողդ ձգտի կարգապահական ոչ մի զանցանք չանել:

Յուրաքանչյուր կարմիր բանակային պետք է անհողդողդ հասնի այն բանին, որ ստորաբաժանումը, զորամասը ոչ մի կարգապահական զանցանք չունենա:

[redacted]

Ինչո՞ւ կարմիր բանակայինը պետք է ճիշտ կատարի զինվորական կարգապահության կանոնները:

Ինչո՞ւ հատուկ խիստ պատժի միջոցներ են կիրառվում կարգապահության խմբական խախտումների մասնակիցներին և բողոքի խմբական հայտարարությունների նկատմամբ:

## ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

*Խստագույն կենտրոնացումն ու կարգապահությունը մեր բանակում պահանջում են ամեն մի զինվորական ծառայողից միաբան, ընկերական վերաբերմունք, փոխադարձ հարգանք, օգնություն մարտական ծառայության կատարելու դեպքում խաղաղ ժամանակ և կռվում:*

*Բուրժուական բանակներում կարգապահությունը հիմնված է զինվորների բուրժուազիայի ծոցից ելած սպաներին դասակարգայնորեն ենթարկվելու վրա: Զինվորների և սպայի միջև չկա և չի կարող լինել դասակարգային շահերի միասնություն:*

*Բոլորովին այլ է Կարմիր բանակում, որտեղ բոլորն առանց խտրության զինվորական ծառայողներն օժտված են միատեսակ քաղաքական իրավունքներով, որտեղ գոյություն ունի ամուր դասակարգային միաձուլություն բոլոր զինվորական ծառայողների միջև, որտեղ կարգապահությունը հիմնված է զինվորական ծառայողների դասակարգային գիտակցության վրա, որտեղ չկան այլ և այլ դասակարգային շահեր շարքային և պետերի կազմի միջև: Այստեղից միանգամայն ակնհայտնի է, որ որքան կարգապահությունն ուժեղ լինի, որքան ամեն մի զինվորական ծառայող գիտակցաբար վերաբերվի իր պարտականություններին, այնքան լավ կլինի նաև փոխհարաբերությունը զինվորական ծառայողների միջև, այնքան զորեղ կլինի Կարմիր բանակի կարողությունն և մարտունակությունը:*



*Հասկանալի է, որ Կարմիր բանակում բոլորովին անթույլատրելի է զինվորական ծառայողի մարդկային արժանապատվության որևէ ստորացում: Այդ տեսակ երևույթները բնորոշ են բուրժուական բանակների համար, ինչպես՝ կոպիտ վերաբերմունքը, հայհոյանքը, ձեռքը ճակատին դնելով բարևելը, Կարմիր բանակում խիստ կերպով հետապնդվում են: Կարմիր բանակում չկա նաև նախատական երևույթ—սպասյակ (դենշչիկ) (սպային ծառայող զինվոր), որին այնպես ծաղրում էին ցարական բանակի սպաները:*

*Կարմիր բանակում շարքայինի և պետերի կազմի դասակարգային շահերի և խնդիրների ընդհանրությունը շարքային և պետական կազմին դարձնում են Կարմիր բանակի չինարարության մասնակիցներ: Կարմիր բանակայինը լի հավատով է վերաբերվում դեպի իր հրամատարը: Ամեն զինվորական ծառայող հաստատ գիտե, որ նրա պետի կարգադրությունները ուղղված են դեպի Կարմիր բանակի մարտունակության ամրացումը, դեպի նրա դասակարգային շահերի պաշտպանությունը:*

*Կարմիր բանակում, ինչպես և մեր ամբողջ երկրում, ծեծապես ծավալված է ինքնաքննադատությունը, որում ներգրավված է Կարմիր բանակի ամբողջ անձնական կազմը:*

Ինքնաքննադատությունը Կարմիր բանակում հիմնական նպատակն ունի աջակցել պետկազմին և կուսկազմակերպություններին Կարմիր բանակի մարտունակությունն ուժեղացնելու գործում: Ինքնաքննադատությունն օգնում է կարմիր բանակայիններին և պետկազմին կռվել զանազան պակասությունների և բյուրոկրատիզմի դեմ Կարմիր բանակի շինարարության մեջ և դրանով լավացնում է բանակի մարտական պատրաստությունը:

Ինքնադատության և քննադատության չեն կարող ենթարկվել հրամատարների և պետերի հրամանները և կարգադրությունները: Բոլոր հրամանները և կարգադրությունները պետք է ճիշտ և իր ժամանակին կատարվեն: Այլապես բանակում ոչ մի կարգ և կարգապահություն չի լինի: *Յուրաքանչյուր տված հրամանի համար հրամատարը կրում է պատասխանատվություն: Կատարելով ճիշտ կերպով հրամատարի տված հրամանը զինվորական ծառա-*

յողը կարող է, յեթե նա գտնում է պետի գործողությունները անօրինական, սահմանված կարգով գանգատվել նրանց դեմ:

[redacted]

Ինչի՞ վրա յե հիմնված զինվորական ծառայողների փոխհարաբերությունը Կարմիր բանակում:

Ինչո՞վ են տարբերվում զինվորական ծառայողների փոխհարաբերությունները Կարմիր բանակում բուրժուական բանակից:

Ի՞նչպիսի խնդիրներ ունի ինքնաքննադատությունը Կարմիր բանակում:

## ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԲԱՆԱԿՈՒՄ

*Մեր բանակը—պրոլետարական դիկտատուրայի հենարանն ու զենքն է: Մեր թշնամիները լարում են իրենց ամբողջ ուժերը, վորպեսզի քայքայեն մեր բանակը, խորտակեն նրա մարտունակությունը և օգտվելով դրանից, հարձակվեն խորհրդային հանրապետությունների վրա: Դրա համար մեր թշնամիները փորձում են մտնել Կարմիր բանակը, վորպեսզի ագիտացիա մղեն խորհրդային իշխանության և կոմունիստական կուսակցության դեմ, գաղտնի ռազմական փաստաթղթեր գողանան, քիչ գիտակից կարմիր բանակայիններին մղեն դասալքության, կարգապահությունը խանգարելու և ամեն տեսակ այլ գործողությունների, վորոնք վնաս են բերում Կարմիր բանակին: Դասակարգային թշնամու գործակալների դեմ կռվելու համար Կարմիր բանակում ստեղծված են ՄՊՔՎ (Միացյալ Պետական Քաղաքական Վարչություն) հատուկ բաժիններ:*

*Զինվորական ծառայողների գործերը, վորոնք խանգարում են զինվորական կարգապահությունը կամ ապօրինի հանցանքներ են կատարել, քննելու և դատելու համար, Կարմիր բանակում կան հեղափոխական տրիբունալներ: Ռազմական տրիբունալները բանակում—դա ռազմական դատարաններն են: Այդ տեսակ հսկա կազմակերպության մեջ, ինչպես Կարմիր բանակն է, ընկնում են անկայուն տարրեր, վորոնք իրենց քիչ գիտակցությամբ կամ հանցագործ նպատակով խանգարում են զինվորական կարգապահությունը, հափշտակում են ժողովրդական բարիքը, դասալքում են,*



*հարբում, կաշառք են առնում կամ ուրիշ հանցագործ գործողություններ են կատարում: Այդ տեսակ հանցանքների համար նրանց հանձնվում են ռազմական տրիբունալին:*

*Հեղափոխական օրինականության հսկելու համար բանակում կան ռազմական դատախազներ: Ռազմական դատախազների խնդիրն է—հսկել Խորհրդային իշխանության դեկրետների և վորոշումների, Կարմիր բանակում յեղած հրամանների ճիշտ կատարման վրա: Յուրաքանչյուր զինվորական ծառայող, կարմիր բանակային կարող է դատախազին գանգատ տալ զինվորական ծառայողի ապօրինի գործողությունների համար: Դատախազը պարտավոր է այդ գանգատի հիման վրա անմիջապես հետաքննություն և քննություն կատարել և մեղավորներին դատական պատասխանատվության յենթարկել:*

*Կարմիր բանակայինի, հրամանատարի, կոմիսարի, քաղաշխատողի կոչումը— պատվավոր կոչում է: Յեվ ամեն վոք, ով արատավորի այդ կոչումը յենթակա յե խիստ պատժի: Ուստի ամեն մի կարմիր բանակային պետք է վոչ միայն ինքը չխանգարի սահմանված կարգապահությունը և օրենքները, այլև դրանից յետ պահի մյուսներին: Իսկ յեթե նկատվի, վոր վորևե մեկը ապօրինի հանցանք է գործում, պարտավոր է տեղեկացնել իր հրամանատարին: Յուրաքանչյուր կարմիր բանակային պարտավոր է ամեն կերպ օգնել հեղափոխական օրինականության և դատական մարմիններին հաջողությամբ կռվելու ամեն տեսակ հանցագործ գործողությունների դեմ Կարմիր բանակում: Դա—ամեն մի կարմիր բանակայինի պարտքն և պարտականությունն է:*

[redacted]

Ինչպիսի՞ խնդիրներով է զբաղվում ՄՊՔՎ Հատուկ բաժինները, հեղափոխական տրիբունալները և ռազմական դատախազները Կարմիր բանակում:

## ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կարմիր բանակում կարմիր բանակայինը օգտվում է խորհրդային հանրապետության քաղաքացու բոլոր իրավունքներով: *Կարմիր բանակայինին և նրա ընտանիքին Խորհրդային իշխանության հատուկ օրենքներով վերապահված են հատուկ իրավունք-*

ներ և առավելություններ (արտոնություններ հարկի նկատմամբ և այլ արտոնություններ և առավելություններ)։

Կարմիր բանակայինը մասնակցում է բոլոր աշխատավորության հետ մեր յերկրի քաղաքական և հասարակական կյանքին։ Նա իրավունք ունի ընտրելու և ընտրվելու խորհուրդներում, կարող է մասնակցել խորհուրդների համագումարներին, հասարակական ժողովներին, կոնֆերենցիաներին, կարող է մտնել կոմունիստական կուսակցության մեջ, կոմյերիտմիության մեջ, կարող է մասնակցել հասարակական-քաղաքական կազմակերպություններում—ՊԱՇԸ-Ավիաքիմում, Մոպրում և այլն։

Կարմիր բանակի զորամասերում հաճախ տեղի յեն ունենում ժողովներ, վորտեղ քննարկվում են քաղաքական հարցեր կամ հարցեր Կարմիր բանակի կյանքից։ Կարմիր բանակայինը խորհուրդների աշխատանքին մասնակցում է ինքը անձամբ կամ կարմիր բանակային պատգամավորների միջոցով, լսում է հաշվետվություններ նրանց գործունեության մասին, տալիս է իր հրահանգները։ Կարմիր բանակայինը մասնակցում է հասարակական-քաղաքական կազմակերպությունների աշխատանքներին, և լրագրության միջոցով և գործունեության ամեն տեսակ այլ ձևերով կարմիր բանակայինը ակտիվ կերպով մասնակցում է մեր յերկրի և Կարմիր բանակի սոցիալիստական շինարարությանը։

Լավագույն և ավելի դասակարգայնորեն տոկուն կարմիր բանակայինները ուղարկվում են գնդային դպրոցները և ուսուցման դասընթացները (բաժնյակները, հեծելավաշտերը և այլն)։ Դպրոցները վերջացնելուց հետո հետևյալ տարին նրանք նշանակվում են կարմիր հրամանատարական կազմի պաշտոնում։

Յուրաքանչյուր կարմիր բանակային ցանկության դեպքում, կարող է և յեթե պիտանի ճանաչվի մտնել ռազմական դպրոց և այն ավարտելուց հետո ստանալ միջին հրամանատարական կազմի պաշտոն։

Ամեն մի կարմիր բանակային կարող է զանգատ տալ իր ուղղակի պետի ապօրինի գործողությունների համար հետևյալ ավագ պետին, կարող է ամեն տեսակ զանգատ տալ տեսչական հարցման ժամանակ, և դրա համար վոչ վոք նրան չի կարող պատժել։ Իսկ յեթե զանգատը հանդիսանում է անհիմն բամբասանք, այդ դեպքում կարմիր բանակայինը՝ հանցանելի յե, դրա համար պատասխանատու յե։

Չի թույլատրվում զանգատվել պետին վերապահված իրա-



վունքների սահմաններում դրված պատժի խստության դեմ, չի թույլատրվում ծառայության պարտականությունները կատարելու ժամանակ, չի թույլատրվում զանգատվել ուրիշների փոխարեն, կոլեկտիվ (խմբական) զանգատներ և հայտարարություններ չեն թույլատրվում, վորովհետև դա քայքայում է բանակը, վիժեցնում է նրա կարգապահությունն և մարտունակությունը։

Կարմիր բանակում ծառայությունն և կարգը կարմիր բանակայինի վրա դնում են վորոշ պարտականություններ, վորոնք նա պարտավոր է լավ իմանալ և խստությամբ կատարել։ Այդ պարտականությունները դրված են Կարմիր յերդման մեջ—Կարմիր բանակի կանոնագրքերում։ Կարմիր բանակայինը պետք է լավ իմանա կանոնագրքերի բոլոր այն կետերը, վորոնք վերաբերվում են նրա վարքին և ծառայությանը։ Նա միայն այդ ժամանակ կիմանա, թե իրենից ի՞նչ են պահանջում, ինչ և ինչպես նա պետք է անի ծառայության ընթացքում, ինչպե՞ս իրեն պահի զորանոցում, զորամասում և նրանից դուրս։ Այն կանոններն և կարգը, վորոնք նախատեսնված են կանոնագրքով, պետք է կատարվեն ճիշտ և մաքուր։ Կանոնագրքերը չիմանալու պատճառաբանությունը վոչ վոքի կողմից չի ընդունվում։

[redacted]

Ի՞նչպիսի իրավունքներով է ոգտվում կարմիր բանակայինը Կարմիր բանակում։

## ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԻ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԽՈՍՏՈՒՄԸ

Մայիսի 1-ին, մեծ համաշխարհային պրոլետարական տոնի օրը, Կարմիր բանակ նոր կանչված կարմիր բանակայինները բերվում են Կարմիր յերդման։

Կարմիր յերդումը—դա կարմիր բանակայինի հանդիսավոր խոստումն է առանց տարակելու, ազնվությամբ և բարեխղճորեն կատարել ԽՍՀՄ աշխատավորության և ամբողջ աշխարհի առաջ հանձն առած պարտականությունները։

Հին, ցարական բանակում զինվորը յերդվում եր ցարին։ Յերդումով նա խոստում եր տալիս ծառայել նրան «հավատով և արդարությամբ», այսինքն կատարել ցարական կառավարության և նրա նշանակած սպաների բոլոր հրամանները։ Իսկ դա ո՞ւմ իշխանությունն եր, ում շահերն եր նա պաշտպանում։ Գործարանա-

*տերերի և կալվածատերերի: Ո՞ւմ դեմ: Բանվորության և աշխատավորության դեմ: Զինվորն այդպիսով խոստում էր տալիս ծառայել և պաշտպանել ցարական իշխանության, կալվածատերերի և գործարանատերերի շահերը: Բանվորության և գյուղացիության դեմ—հենց իրեն դեմ, իրենց դասակարգային շահերի դեմ: Նա խոստանում էր տալիս կռվել բանվորների և գյուղացիության դեմ:*

Այժմ կարմիր բանակայինը յերդվում է բանվոր դասակարգին և աշխատավոր մասսաներին: *Նա խոստանում է տալիս մինչև, չխնայելով իր կյանքը, պաշտպանել և խնամել բանվորների և աշխատավորության դասակարգային շահերը և նրանց իշխանությունը, նրանց թշնամիների—բուրժուայի, կուլակի, կալվածատիրոջ և կապիտալիստների դեմ: Մի՞թե դա յուրաքանչյուր բանվորի և աշխատավորի պատվավոր յերդումը չէ—խոստանում տալ կռվել աշխատավորների շահերի համար, նրանց բուրժուազիայի ճնշումից ազատվելու համար, սոցիալիզմի գործի հաղթանակի համար, բոլոր ժողովուրդների յեղբայրության համար: Դրանումն է Կարմիր յերդման տարբերությունը ցարականից:*

*Յերդման են բերում նրա համար, վոր կարմիր բանակայինը ճիշտ իմանա, թե աշխատավորությունն ի՞նչ պարտականություններ է դնում իր վրա և վոր նա խիստ պատիժ կկրի Կարմիր յերդումը խանգարելու համար: Կարմիր յերդումը խանգարելը խիստ կերպով հետապնդվում է, վորովհետև նա թուլացնում է Կարմիր բանակը—պրոլետարական դիկտատուրայի գործիքը: Կարմիր յերդման ամեն մի խանգարող, դավաճան է, նա գործում է ի վնաս աշխատավորության, նրանց թշնամիների ոգտին: Դրա համար էլ Խորհրդային իշխանությունը խիստ պատժում է նրանց:*

Ի՞նչ է Կարմիր յերդումը և ինչո՞ւ են նրան յենթարկվում:

Ի՞նչպիսի պարտականություններ է Կարմիր յերդումը դնում կարմիր բանակայինի վրա:





## ՀՐԱՄԱՆԱՏԱՐՆԵՐ

Հրամանատարը—դա պետ է, մարտիկների մարտական և քաղաքական ղեկավարը: *Նա պատասխանատու յե կարմիր բանակայինների ուսուցման և դաստիարակության համար, զորամասի մարտական դրության համար. նա պարտավոր է հոգ տանել վորպեսզի կարմիր բանակայինները հայթայթվեն բոլոր անհրաժեշտ իրերով ինչպես՝ զենքով, հագուստով, կերակրով և այլն:*

*Պատերազմի ժամանակ հրամանատարը ղեկավարում է իր զորամասի մարտական գործողությունները և անձամբ պատասխանատու յե մարտական խնդրի հաջող կատարման համար: Նա պատասխանատու յե իրեն հանձնված հարյուրավոր, հազարավոր մարդկանց կյանքի համար, վորոնց մարտի յե տանում: Այդպիսով հսկայական է այն պատասխանատվությունը, վոր կրում է հրամանատարը:*

*Հրամանատարական անձնակազմի կողմից և մարտական պատրաստությունից է կախված բանակի ուսուցման հաջողությունը, իսկ պատերազմի ժամանակ նաև մարտերի հետևանքները: Պետկազմը—*

«ԴԱ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՂԱԿՆ Է ՄԵՐ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՍԻՍՏԵՄՈՒՄ, ԴԱ ԱՅՆ ՑԵՄԵՆՏՆ Է, ՎՈՐԸ ՊՆԴԱՑՆՈՒՄ Է ՆՐԱ ԲՈԼՈՐ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍԵՐԸ, ԴԱ ԱՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՈՒԺՆ Է, ՎՈՐԸ ՎՈՐՈՇՈՒՄ, ԿԱՆՈՆԱՎՈՐՈՒՄ Է ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԲԱՐՈՅԱԿԱՆ ՅԵՎ ՄԱՐՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ՅԵՐԿՐԻ ՆԵՐՍՈՒՄ ՅԵՎ ՅԵՐԿՐԻՑ ԴՈՒՐՍ ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ»: (ՎՈՐՈՇԻԼՈՎ):

*Ուստի Կարմիր բանակի պետերի կազմի ընտրության վրա հատուկ ուշադրություն է դարձրած: Ռազմական դպրոցները և ռազմա-կրթական հիմնարկներն են ուղարկվում ամենից ավելի գիտակից և պրոլետարական հեղափոխության անձնվեր բանվորներ և աշխատավորներ:*

*Դեռ ևս* 1918 *թ., յերբ մենք սկսեցինք մեր Կարմիր բանակը կազմակերպել, Լենինը, դիմելով բանվոր և գյուղացի կուրսանտ-*

ներին, վորոնք պատրաստվում էյին Կարմիր բանակի զորամասերի հրամանատարության համար, ասել է.

«ՀԻՆ ԲԱՆԱԿԸ ՁԵՆՔ ԷՐ ՀԱՐՈՒՍՏՆԵՐԻ ՁԵՌՔԻՆ: ՆՐԱ ՍՊԱՆԵՐԻ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԼՎԱԾԱՏԵՐԵՐԻ ՑԵՐԵՍ ԱՌԱԾ ՏՂԱՆԵՐՆ ԷՅԻՆ, ՎՈՐՈՆՔ ԲԱՆԱԿԸ ՏԱՆՈՒՄ ԷՅԻՆ ԿԵՂԾ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ: ԻՍԿ ՄԵՆՔ ՍՏԵՂԾՈՒՄ ԵՆՔ ՄԵՐ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ, ԿԱՐՄԻՐ ՍՊԱՆԵՐԻՆ, ՎՈՐՈՆՑ ՎՐԱ ՅԵՎ ԴՆՈՒՄ ԵՆՔ ՄԵՐ ԱՄԲՈՂՋ ՀՈՒՅՍԵՐԸ: ՆՐԱՆՑ ԱՌԱՋՆՈՐԴԱԾ ԲԱՆԱԿՆ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԶՈՀ ՊԱՇՏՊԱՆ ԿԼԻՆԻ: ԿԱՐՄԻՐ ՍՊԱՆԵՐԸ ԲԱՆԱԿՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ԿՍԱՀՄԱՆԵՆ: ՆՐԱՆՔ ԱՄԲՈՂՋ ԺԱՄԱՆԱԿ ՇՓՎԵԼՈՎ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՀԵՏ, ՆՐԱՆՑ ԿՍՈՎՈՐԵՑՆԵՆ ՍՈՑԻԱԼԻԶՄԸ ՅԵՎ ՀԱՍԿԱՆԱԼԻ ԿԼԻՆԵՆ, ՎՈՐՈՎՀԵՏԵՎ ԱՆԿԵՂԾ ԿԼԻՆԵՆ ՅԵՎ ԿԿԱՐՈՂԱՆԱՆ ՆՐԱՆՑ ԲՈԼՈՐԻՆ ՔԱՋԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿՈՉԵԼ: ԱՅՆ ԺԱՄԱՆԱԿ ԿԱՐՄԻՐ ՊԵՏԿԱԶՄԻ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՄԵՋ ԿԼԻՆԻ ԱՆՀՈՂԴՈՂԴ ՅԵՎ ԱՆՍԱՀՄԱՆ ՄԵԾ: ԱՅԴ ՏԵՍԱԿ ՊԵՏԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԾ ԲԱՆԱԿԸ ԱՆՀԱՂԹԵԼԻ ԿԼԻՆԻ: ՅԵՎ ԱՅԴ ՏԵՍԱԿ ԲԱՆԱԿ ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ Է ՄԵՐ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ»:

*Ահա այդ տեսակ հրամանատարներ ենք մենք միշտ պատրաստում: Մեր Կարմիր բանակի հրամանատարներն այդպիսին յեն, վորոնց հեղինակությունն անսասան է: Այդ տեսակ հրամանատարների առաջնորդած բանակն անպարտելի յե:*

*Հրամանատարի վրա մեծ պարտավորություն է ընկնում իր զորամասի ուսուցման, կրթության և մարտում ղեկավարելու համար: Դա պահանջում է հրամանատարից ունենալ մեծ քաղաքական և ռազմական պատրաստություն, լավ գիտենալ ռազմական գործը, հաստատակամություն և վճռականություն գործողություններում, համարձակություն և խիզախություն: Հրամանատարին առաջադրած այդ պահանջները, յերբ բավական բարդացել է ռազմական գործը, յերբ մեծացել է ռազմական տեխնիկան և բարդացել է ժամանակակից մարտի բնույթը, ե՛լ ավելի յեն ուժեղացել: Այժմ հրամանատարից ավելի շատ, քան առաջ, պահանջվում է կատարելապես տիրապետել ռազմական տեխնիկային, կարողանալ ղեկավարել զորքերին ժամանակակից բարդ մարտում, լինել քաղաքականապես զարգացած, հայտաբերել հաստատակամություն, վճռականություն, նախաձեռնություն և համարձակություն:*



*Բայց հրամանատարը պետք է կարողանա տիրապետել վոչ միայն այն տեխնիկային, վորն արդեն բանակում կա, այլև ամբողջ ժամանակ կատարելագործվել: Նա պետք է հետևի նոր հայտնված տեխնիկային և տիրապետել նրան, նա պարտավոր է ուսումնասիրել մեր թշնամիների մարտի գործողություններն և միջոցները: Միայն այն ժամանակ նա կկարողանա հաջողությամբ իր զորամասին առաջնորդել և ղեկավարել նրանց մարտում: Խորհրդային իշխանությունն և Կարմիր բանակն այդպիսի պահանջներ են առաջադրում հրամանատարին: Այդ բոլորը հրամանատարից պահանջում է մեծ յեռանդ, ջանասիրություն և աշխատանք:*

*Հսկայական են հրամանատարի պատասխանատվությունն և պարտականությունները: Հրամանատարին պատրաստելու համար պահանջվում է յերկար ժամանակ և աշխատանք: Ուստի և պետական կադրի ծառայության ժամկետները բավական յերկար են, քան կարմիր բանակայիններինը: Դասակի հրամանատարը, վաշտի հրամատարը կարող են զորացրվել միայն 40 տարեկան դառնալուց հետո, գնդի հրամանատարը—45 տարեկան, Դիվիզիայի հրամանատարը—50 տարեկան դառնալուց հետո:*

*Այդպիսով հրամանատարի և քաղաշխատողի համար զինվորական ծառայությունը հանդիսանում է նրա մշտական աշխատանքը: Վորպեսզի հրամանատարը և քաղաշխատողը կարողանան իրենց ամբողջ ուժը նվիրել կարմիր բանակայինների ուսուցմանն և դաստիարակությանը, նրանց արգելվում է վորևէ այլ աշխատանքով զբաղվել: Իսկ նրանց ծառայությունը բանակում վարձատրվում է վորոշ ռոճիկով: Սակայն մեր հրամանատարների ռոճիկը բավական քիչ է տարբերվում բանակների հրամանատարների ռոճիկից:*

Կարմիր բանակի մեր հրամատարն ի տարբերություն բուրժուական յերկրների բանակներից հանդիսանում է վոչ միայն կարմիր բանակայինների զինվորական պետ, այլև քաղաքական դաստիարակիչ: *Նա կարմիր բանակայինների հետ միասին ակտիվ կերպով մասնակցում է յերկրի հասարակական-քաղաքական կյանքին, սոցիալիստական շինարարությանը: Հրամանատարն ուսման մեջ, իր ամբողջ գործունեության մեջ ցույց է տալիս կարգապահության դասակարգային գիտակցության և ակտիվության օրինակ, միաձուլելով բոլոր կարմիր բանակայիններին կուսակցության գլխավոր գծի և Խորհրդային իշխանության հերթական խնդիրների*

շտուրջը: Միայն մեր յերկրում, մեր բանակում հնարավոր է շարքային և պետերի կազմի այդ տեսակ սերտ միասնականությունը:

Զորամասի մարտական պատրաստության մեջ և մարտում մեծ դեր է խաղում կրտսեր հրամանատարը: Կրտսեր հրամանատարները պատրաստվում են զորամասերում: Կրտսեր հրամանատարներ պատրաստելու համար ընտրում են լավ, ամենից ավելի գիտակից և քաղաքականապես զարգացած, բանվոր և կոլտնտեսական նորակոչ կարմիր բանակայիններ:

Կրտսեր հրամանատարը, ինչպես և շարքային կազմը, գտնվում են ժամկետային ծառայության մեջ: Ժամկետային ծառայությունը վերջացնելուց հետո, վորը մնում է բանակում գերժամկետիկ ծառայության մեջ, կարող է ավելի բարձր շարունակել իր զինվորական կրթությունը ռազմական դպրոցներում: Նա կարող է միջին պետկազմի կոչման համար քննություն տալ, նաև առանց ռազմական դպրոց մտնելու: Կրտսեր հրամանատարը՝ կարմիր բանակայինների մերձավոր, անմիջական պետն է: Նա մշտապես գտնվում է կարմիր բանակայինների մեջ, ապրում է նրանց հետ միասին: Կարմիր բանակայինների և կրտսեր հրամանատարի միջև առանձին սերտ և մտերիմ փոխհարաբերություններ կան:

Կարմիր բանակայիններից պահանջելով վոր խստությամբ պահպանեն կարգապահությունն և սահմանված կանոնները կրտսեր հրամանատարը պետք է ինքն ուրիշների համար խիստ գիտակցական վարքի և կարգապահության որինակ հանդիսանա: Կարմիր բանակայիններին ներգրավելով հարվածայնության և սոցմրցակցության մեջ, նա պետք է որինակելի հարվածային լինի, իր զորամասի հասարակական-քաղաքական կյանքին ակտիվ մասնակից լինի:

Կարմիր բանակայինները պարտավոր են կատարյալ հարգանքով վերաբերվել դեպի իրենց կրտսեր հրամանատարը, հիշել, վոր նա նրանց պետը, բարեկամն և ուսուցիչն է, ավագ, փորձված ընկերն է: Կարմիր բանակայինը պարտական է խիստ, անմիջապես, բանիմաց, ճշտությամբ կատարել նրա բոլոր հրամաններն և կարգադրությունները:

Հրամանատարի վրա ընկնում են հսկայական պատասխանատվություն և շատ բարդ և դժվար պարտականություններ: Բանակի և յերկրի հանդեպ իր այս պարտականությունները հրամանատարը կարող է հաջողությամբ կատարել այն ժամանակ, յեթե ստեղծված կլինեն բարեհաջող պայմաններ զորամասի աշխատանքի և դե-



կավարության համար, յերբ բոլոր նրա հրամաններն և կարգադրությունները լրիվ ի կատար կածվեն, յերբ կարմիր բանակային մասսան հրամանատարին ամեն տեսակ ոգնություն ցույց կտա իր գործունեության ընթացքում: Յուրաքանչյուր կարմիր բանակային պարտական է անառարկելի յենթարկվել իր պետին և նրանց ոգնություն ցույց տալ զորամասի մարտական պատրաստության աշխատանքում:

Զորամասում հրամանատարն ինչպի՞սի պարտականություններ է կրում:

Զորամասում կրտսեր հրամանատարն ի՞նչ նշանակում և դեր ունի:

## ՀՐԱՄԱՏԱՐՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍԻ ՈԳՆԱԿԱՆՆԵՐ—

Կարմիր բանակում, հրամանատարների կողքին կան նաև կոմիսարներ:

Քաղաքացիական կռվի ժամանակ, Կարմիր բանակի կազմակերպման ժամանակ, յերբ զինվորական մասնագետների մեծ անհրաժեշտություն կար, Կարմիր բանակ կանչվեցին հին բանակի զինվորական աշխատողներ: Բանվորներն և գյուղացիներն իրենց զինվորական մասնագետները չունեյին, ցարական ռեժիմի ժամանակ նրանց մուտքը ռազմական դպրոցներն արգելված եր:

Հին բանակի նախկին սպաներին զինվորական ծառայության կանչելով, Խորհրդային իշխանությունը չեր կարող նրանց բոլորին ամենայնի հավատալ, ուստի և զինվորական մասնագետի կողքին դրեց կուսակցության և խորհրդային իշխանության ներկայացուցչին—զինվորական կոմիսարին: Կարմիր բանակում կոմիսարներ նշանակվում եյին ՀԱՄԿԿ(բ) ամենից ավելի տոկուն, կայուն և ակտիվ անդամներից: Կոմիսարները հանդիսանում եյին վոչ միայն խորհրդային իշխանության քաղաքական իշխանության ներկայացուցիչներ Կարմիր բանակում, այլ նույնպես և ամենից առաջ—կոմունիստական կուսակցության պատասխանատու ներկայացուցիչներ: Նրանք կրում եյին պատասխանատվություն զորամասի մարտական և քաղաքական դրության համար: Նրանց պարտականությունների մեջ եր մտնում լինել Խորհրդային իշխանության

սրատես աչք: Նրանք հետևում եյին այն բանին, վորպեսզի դավաճանություն չլինի, խորհրդային իշխանության բոլոր դեկրետներն և կարգադրությունները ուղիղ և ճիշտ և Կարմիր բանակի հրամանները կատարվեն: Կոմիսարը հսկում եր այն բանին, վորպեսզի խստությամբ պահպանվեն կարմիր բանակայինների իրավունքները: Կոմիսարի վրա յեր ընկնում, նաև բոլոր քաղաքական և կրթական աշխատանքը Կարմիր բանակում:

Յերկար տարիներ զինվորական մասնագետի հետ կողք-կողքի գտնվելն իզուր չանցավ: Կոմիսարը սովորեց զինվորական մասնագետից: Կոմիսարները ուղարկվեցին ռազմական գործը սովորելու համար զինվորա-կրթական հիմնարկները, ռազմական կուրսերը: Յեվ այժմ մենք ունենք շատ հրամատարներ, վորոնք նախապես կոմիսարներ են յեղել, իսկ հետագայում սովորել են ռազմական դպրոցում և ակադեմիաներում: Բացի դրանից, մեր ռազմական դպրոցներն արդեն մեզ տվել են բանվորներից և աշխատավորներից պատրաստած մեծ թվով հրամատարներ: Քաղաքացիական պատերազմի ընթացքում և բանակի շինարարության հետագա տարիներում մենք ընտրեցինք նախկին բոլոր լավագույն և բարեհույս սպաներից նրանց, վորոնք աշխատում եյին վոչ թե վախից ստիպված, այլ բարեխղճորեն, քաղաքացիական կռվում սպիտակգվարդիականների և իմպերիալիստների դեմ վարած կռվում ապացուցեցին, իսկ հետո Կարմիր բանակի շինարարության գործում ցույց տվեցին իրենց նվիրվածությունը պրոլետարական պետությանը: Այժմ բանակում հրամատարների գերազանց մեծամասնությունը բանվորներից և աշխատավորներից են: Մենք այժմ ունենք ամուր զոդված բանվորա-գյուղացիական պետերի կազմ, վորն ամբողջովին ապահովում է Կարմիր բանակի ամրացման անվտանգությունը, վորպես պրոլետարական դիկտատուրայի գործիք: Յուրաքանչյուր 100 հրամատարից 57-ն այժմ կոմունիստական կուսակցության անդամներ և թեկնածուներ են: Յուրաքանչյուր 100 հրամատարից 32-ն հանդիսանում են բանվորներ, մնացածները —գյուղացիներ և ծառայողներ են: Դիվիզիաների. գնդերի, գումարտակների բոլոր հրամատարների 97 տոկոսը,— քաղաքացիական պատերազմի մասնակիցներ են: ԲԳԿԲ հրամատարները քաղաքականապես լավ պատրաստված, տոկուն են ու ձեռք են բերել զորքերը ղեկավարելու քաղաքական զգալի փորձ:

Ուստի այդ բոլորը հնարավորություն տվեց Կարմիր բանակում անցնել միանձնյա ղեկավարության:



Կարմիր բանակի կոմիսարական կազմը այժմ ազատված է հրամատարների շարային, վարչական և տնտեսական գործունեության վրա ունեցած ամենօրյա հսկողության պարտականություններից: Զինվորական կոմիսարին ամբողջությամբ վերապահված են զորամասի ղեկավարության քաղաքական և կուսակցական իրավունքներ և պարտականություններ. Նա հրամատարի հետ միասին նույնպես պատասխանատու յե զորամասի դրության համար:

Յեթե հրամատարը ունի անհրաժեշտ կուսակցական ստաժ ու փորձ կուսակցական և քաղաքական աշխատանքներում, նա նշանակվում է միանձնյա-հրամատար: Այդ դեպքերում կոմիսարի պաշտոնը փոխարինվում է քաղաքական մասի օգնականի պաշտոնով: Միանձնյա-հրամատարն իրականացնում է զորամասի ընդհանուր կուսակցական և քաղաքական ղեկավարությունը: Նրա քաղաքական մասի օգնականը գլխավորում է զորամասի քաղաքական ապարատը, կազմակերպում, անմիջականորեն ղեկավարում և գործնականում անց է կացնում ամբողջ կուսակցական-քաղաքական աշխատանքը զորամասում: Նա յենթարկվում է միանձնյա-հրամատարին, իսկ քաղաքական տեսակետից միաժամանակ և վերադաս քաղաքական մարմնին:

Կոմիսարը կամ քաղաքական մասի օգնականը ղեկավարում է զորամասի ամբողջ կազմի քաղաքական դաստիարակությունը դասակարգային միաձուլության և կոմունիստական լուսավորության վոգով: Նա ղեկավարում է զորամասի կուսակցական կազմակերպությունները, կազմակերպում և հետևում է քաղաքական պարապմունքներին և մասսայական աշխատանքին. Հասարակական կազմակերպություններին, միջոցներ է ձեռք առնում զորամասի ամբողջ անձնական կազմը ներգրավելու հասարակական-քաղաքական աշխատանքում:

[redacted]

Ի՞նչ դեր եյին կատարում կոմիսարները քաղաքացիական կռիվներում:

Ինչո՞վ բացատրել միանձնյա ղեկավարությանն անցնելը:

Այժմ կոմիսարների և հրամատարների քաղաքական մասի օգնականներն ի՞նչ աշխատանք են կատարում:

---

## ՎԱՇՏԻ ՀՐԱՄԱՏԱՐՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍԻ ՕԳՆԱԿԱՆՆԵՐ— ՔԱՂՂԵԿՆԵՐԸ

*Քաղղեկ նշանակվում է ամեն մի վաշտում, խմբում, հեծելավաշտում կամ բաժնյակում կոմունիստական կուսակցության անդամներից: Իսկ յեթե վաշտի հրամատարը—կուսակցական է, ունի անհրաժեշտ կուսակցական ստաժ և փորձ կուսակցական և քաղաքական աշխատանքում, նա միաժամանակ նշանակվում է նաև քաղղեկ: Այդ դեպքում նրան քաղաքական մասի օգնական է նշանակվում:*

*Վաշտի հրամատարի քաղաքական մասի օգնականի կամ քաղղեկի պարտականությունների մեջ են մտնում կարմիր բանակայինների քաղաքական ուսուցման և դաստիարակության ամեն տեսակ հոգսը:*

*Քաղղեկը կամ վաշտի հրամատարի քաղաքական մասի օգնականը կազմակերպում և տանում է կարմիր բանակայինների հետ զրույցներ, քաղաքական պարապմունքներ, նա հսկում է դասակների քաղաքական պարապմունքների վրա:*

*Քաղղեկը հոգ է տանում, որ կարմիր բանակայինի ազատ ժամանակն օգտակար կերպով անցկենա: Նա ղեկավարում է և պատասխանատու յե լենինյան անկյան աշխատանքի և գրության համար: Քաղաքական ղեկավարն հանդիսանում է կարմիր բանակայինների և վաշտի բջիջի ակտիվ անդամների մեջ մասսայական ագիտ—պրոպագանդիստական աշխատանքի կազմակերպող:*

[redacted]

Քաղղեկն ի՞նչ դեր և պարտականություններ է կատարում:

---

## ՀԵՂՌԱԶՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ, ՇՏԱԲՆԵՐ, ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Մեր Միության ամբողջ տերիտորիան բաժանված է ռազմական շրջանների: Շրջանի բոլոր զորամասերի և զինվորական վարչությունների ղեկավարությունը պատկանում է շրջանի հեղռազմխորհրդին զինվորական շրջանի հրամատարի գլխավորությամբ: Շրջանի Հեղռազմխորհուրդը յենթարկվում է ԽՍՀՄ Հեղռազմխորհուրդին:*



*Հրամատարի հրամանները զորամասին հանձնելու համար, հսկել նրանց կատարմանը, պատրաստել ուսուցման պլաններ, զորական միավորություններում և զորամասերում հրամատարին օգնելու համար կան շտաբներ:*

*Խաղաղ ժամանակ բանակի մարտական պատրաստությունն ապահովելու համար և պատերազմի ժամանակ նրանց ոպերացիաների համար հարկավոր է՝ պարեն, հանդերձանք, զենք, փամփուշտներ, արկեր և այլն: Այդ մասին հոգ են տանում հատուկ վարչություններ, վորոնք կան բանակում:*

## ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՂ. ՌԱԶՄ. ԽՈՐՀՈՒՐԴ

*Խորհրդային Հանրապետությունների Միության բոլոր զինված ուժերի ղեկավարությունը պատկանում է ռազմական և ծովային գործերի ժողովրդական կոմիսար և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության հեղափոխական ռազմական խորհրդի նախագահին:*

*Հեղռազմխորհուրդը նշանակվում է Խորհուրդների Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի կողմից:*

*ԽՍՀՄ Հեղռազմխորհրդին կից կան հետեվյալ կենտրոնական վարչությունները, վորոնք յենթակա յեն Հեղռազմխորհրդին:*

*ԲԳԿԲ շտաբը—վարում է ԽՍՀՄ ռազմական պաշտպանության պատրաստությունը, մշակում է մարտական գործողությունների պլանները:*

*ԲԳԿԲ քաղաքական վարչությունը (ՊՈՒՐ), վորը միաժամանակ ըստ կուսակցության կանոնադրքի հանդիսանում է ՀամԿԿ(բ) Կկ ռազմական բաժանմունքը, վորը ղեկավարում է ինչպես կուսակցական, քաղաքական և քաղաքական-լուսավորական աշխատանքը Կարմիր բանակում, նույնպես և այն աշխատողների ռազմա-քաղաքական պատրաստության գործը, վորոնք սովորում են արտազորային կարգով:*

*ԲԳԿԲ Գլխավոր վարչությունը— վարում է պետական հաշվառումն և բաշխումը, զորքերի կազմությունը և ծառայությունը և ղեկավարում է ռազմակրթական հիմնարկները:*

*Մարտական պատրաստության վարչությունը —վարում է ԲԳԿԲ մարտական պատրաստությունը:*

*ԲԳԿԲ սպառազինումների վարչությունը —վարում է սպառազինման հարցերը և Կարմիր բանակի տեխնիկական սարքավորումը:*

վարչություններ ։
Հանրապետությունների Միության Հեղռազմխորհրդի նախա-
գահն է հին փորձված բոլշևիկ—Կլիմենտ Եֆրեմովիչ Վորոշի-
Կան նաև ռազմածովային ուժերի վարչություն, ռազմո-
դային ուժերի վարչություն, մեքենայացման և մոտորացնելու
վարչություն, ռազմասանիտարական և ռազմա-անասնաբուժական
լով, իսկ նրա տեղակալներն են—Յան Բորիսովիչ Գամարնիկը,
Միխայիլ Նիկոլայեվիչ Տուխաչևսկին և Սերգեյ Սերգեյևիչ Կա-
մենևը ։

---







## ՌԱԶՄԱԿԱՆ ՅԵՎ ԾՈՎԱՅԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ ՅԵՎ ԽՍՀՄ ՀԵՂ. ՌԱԶՄ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ԿԼԻՄԵՆՏ ՅԵՖՐԵՄՈՎԻՉ ՎՈՐՈՇԻԼՈՎ

Ընկ. Վորոշիլովը, որն անցել է խիստ մարտական հեղափոխական ճանապարհ, սկսած Լուգանսկի բանվոր-փականագործությունից մինչև աշխարհում պրոլետարիատի առաջին բանակի ժողկոմությունը, լայն չափով ծանոթ է ամբողջ կուսակցությանն և աշխատավոր մասսաներին, որպես տոկուն և կարգապահ բոլշևիկ, որպես լենինիզմի անհաշտ և կայուն մարտիկ, որպես Լենինի ամենալավ և հավատարիմ աշակերտներից մեկը և որպես կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի և Քաղաքական բյուրոյի ականավոր անդամ ։

Բանվոր դասակարգը և աշխատավոր մասսաները լավ գիտեն և հիշում են, որ ընկ. Վորոշիլովի անվան հետ է կապված քաղաքացիական պատերազմի մի շարք ճակատների հաղթանակները— Ցարիցինի տակ, 1-ին հեծյալ բանակի, Կրոնշտադտի տակ և այլն ։

Ընկ. Վորոշիլովի անմիջական ղեկավարությամբ Կարմիր բանակը վերջին տարիներս հասել է հսկայական հաջողությունների անվտանգության ամրացման գործում և հաջողությամբ տիրա-

պետում է ժամանակակից, նոր տեխնիկային և ներկայիս մարտի բարդ ձևերին, մինչ պատրաստ լեռ մղելու պրոլետարական դիկտատուրայի թշնամիների հարձակումը:

Ընկ. Վորոշիլովն այժմ 50 տարեկան է, վորոնց մեծ մասը նվիրված է յեղել պրոլետարիատի անկեղծորեն ծառայելուն, կոմունիզմի համար մղվող մեծ կռվին:

Ընկ. Վորոշիլովը ծնվել է 1881 թ., Յեկատերինոսլավսկի նահանգի Վերխնեե գյուղում: Նրա հայրն աշխատում եր յերկաթգծում վորպես պահապան, իսկ մայրն աշխատում եր օրավարձով:

Հաճախ նրանց վիճակվել է քաղցած մնալ հոր անգործության հետևանքով: 6—7 տարեկան Կլիմենտի Յեփրեմովիչը գնաց աշխատանքի շախտերում կոլչադան ջոկելու, դրա համար նա օրական ստանում եր 10 կոպեկ:

1896 թ. նա մտավ Ալչևսկայա կայարանին կից զավոդը: Շուտով զավոդում կազմակերպած գործադուլի պատճառով նա յենթարկվեց բանտարկության:

Յերեք տարի շարունակ ընկ. Վորոշիլովն անաշխատանք եր: 1903 թ. ընդունվում է կուսակցության մեջ և մտնում Լուգանսկի կուսակցական կոմիտեյի մեջ:

1905 թ. ամառը նրան հաջողվում է նորից մտնել Գարտմանի զավոդը, վորտեղ նա ղեկավարում է գործադուլները: Հենց այդ ժամանակել ընտրվում է գավոդում պատգամավորների խորհրդի նախագահ: Հուլիսին, գործադուլի ժամանակ, բանտարկվում է զավոդում և մինչև մահվան դուռը հասած ծեծից հետո մնում է բանտում մինչև դեկտեմբեր:

Դեկտեմբերին, բանտին մոտեցած հազարավոր բանվորների պահանջով գրավականով ազատվում է: 1906 թ. սկզբին վորպես պատգամավոր գնում է կուսակցության Ստոկհոլմի համագումարը: Վերադառնալով համագումարից ընկ. Վորոշիլովն ուժեղ կերպով պատրաստում է կազմակերպությունը մարտական գործողությունների համար:

Յերկու անգամ գնում է Ֆինլանդիա և մեծ քանակությամբ զենք է բերում, վորը ձեռք է բերում ֆիննական հեղափոխականներից:

Ամբողջ ժամանակ մնալով պատգամավորների ժողովի նախագահ, ընկ. Վորոշիլովն ընտրվում է Գարտմանի զավոդում նոր կազմակերպված բանվորների արհմիության նախագահ:



1907 թ. գարնանը նա գնաց Լոնդոնի կուսակցական համագումարը վորպես պատգամավոր Լուգանսկի կուսակցական կազմակերպությունից:

1907 թ. հուլիսին, նա բանտարկվում և նույն տարվա հոկտեմբերին աքսորվում է 3 տարով Արխանգելսկի նահանգը:

1907 թ. դեկտեմբերին, աքսորատեղից փախչում է և կուսակցության կենտրոնական կոմիտեյի կողմից ուղարկվում է Բաքու աշխատելու համար, վորտեղ աշխատում է մինչև 1908 թ. աշնանը, իսկ հետո գնում է Պիտեր: Պիտերում նա նորից ձերբակալվում է և սեպտեմբերին ուղարկվում Արխանգելսկի նահանգը:

Աքսորատեղում, Խոլմագորում, ընկ. Վորոշիլովը 1912 թ. հունվարին նորից բանտարկվում է և Արխանգելսկի բանտում նստում մինչև նոյեմբեր, իսկ հետո ուղարկվում Մեզենսկի գավառը: 1912 թ. ազատվելով աքսորից, նա մտնում է Դյումո զավոդի բանվորական կոոպերատիվը, բայց 3—4 ամիս հետո նորից է ձերբակալվում և ուղարկվում Չերդինսկի կողմերը: 1914 թ. Չերդինից ազատվում և մտնում է Ցարիցինի զինագործարանը:

Ցարիցինում ընկ. Վորոշիլովը հավաքում է գավոդներում ցրված հին բոլշևիկներին, բայց շուտով ստիպված է լինում դըմնալ Պիտեր, ցարական բանակում ծառայելուց խուսափելու համար:

Փետրվարյան հեղափոխության առաջին օրերից ընկ. Վորոշիլովը —անդամ է Պետրոգրադի բանվորական պատգամավորների խորհրդի և բոլշևիկյան ֆրակցիայի բյուրոյի: Մարտին նա Դոնբասում է: Ապրիլին մասնակցում է կուսակցական կոնֆերենցիային վորպես պատգամավոր, իսկ հետո—կուսակցության 6-րդ համագումարին վորպես պատգամավոր:

Ընկ. Վորոշիլովը զինվորական աշխատանքը սկսել է բանվորական ջոկատի հրամանատարությունից, վորը նա կազմակերպել եր 1918 թ. մարտին, և կռվում եր Ուկրաինան գրավող գերմանական զորքերի դեմ: Շուտով նա նշանակվում է Ուկրայնական 5-րդ բանակի հրամանատար, իսկ հետագայում հրամանատար եր այն ջոկատների, վորոնք նահանջում եյին Ուկրաինայից դեպի Վոլգա, դեպի Ցարիցին գերմանական զորքերի ճնշման տակ:

Յերեք ամսից հետո «Վորոշիլովի զորքերի խմբերը» ծածուկ հասնում են Ցարիցին, և այստեղ այդ խմբերից և ուրիշ զորամասերից կազմակերպվում է 10-րդ կարմիր բանակը, վորի հրամանատարությունը հանձնվում է ընկ. Վորոշիլովին:

1918 թ. նոյեմբերին ընկ. Վորոշիլովը նշանակվում է Ուկրայնայի բանվորա-գյուղացիական կառավարության անդամ, իսկ 1919 թ. փետրվարին Ուկրայինայի ներքին գործերի ժողովրդական կոմիսար: Նույն տարվա ապրիլին նա ընտրվում է ՈւԿԿ(բ) ԿԿ-ի անդամ, իսկ մայիսին նշանակվում է Խարկովի զինվորական շրջանի հրամանատար: Հենց այդ ժամանակ էլ նա լիկվիդացիայի յե յենթարկում Գրիգորևի ապստամբությունն Ուկրայինայում, վորից հետո նշանակվում է Աշխատանքի և Պաշտպանության խորհրդի կողմից լիազոր Դոնբասում:

1919 թ. հունիսին ընկ. Վորոշիլովը նշանակվում է 14-րդ բանակի հրամանատար, իսկ հուլիսին —ներքին ուկրայնական ճակատի զորքերի հրամանատար և ընտրվում է անդամ բանվորա-գյուղացիական պաշտպանության խորհրդի և ՈւԿԿ(բ) ԿԿ Քաղբյուրոյի անդամ: Նոյեմբերին նա նշանակվում է 1-ին Հեծյալ բանակի ՀՌԽ անդամ: 1921 թ. մարտին կուսակցական 10-րդ համագումարին ընկ. Վորոշիլովը համագումարի մյուս անդամների հետ միասին ուղեվորվում է Կրոնշտադտի ապստամբությունը լիկվիդացիայի յենթարկելու և նույն համագումարի կողմից ընտրվում է ՌԿԿ(բ) ԿԿ անդամի և հարավ-արևելյան բյուրոյի ԿԿ անդամ:

1921 թ. մայիսին ընկ. Վորոշիլովը նշանակվում է Հյուսիսային Կովկասի զինվորական շրջանի զորքերի հրամանատար, վորտեղից 1924 թ. ապրիլին փոխադրվում է Մոսկվայի զինվորական շրջանի զորքերի հրամանատարի պաշտոնին:

1924 թ. սկզբին ընկ. Վորոշիլովը նշանակվում է ԽՍՀՄ ՀՌԽ անդամ և ընտրվում է նրա նախագահության մեջ: Ընկ. Ֆրունզեյի մահից հետո նա նշանակվում է ԽՍՀՄ ՀՌԽ նախագահ և Ռազմածովային ժողկոմ:

1921 թ. ընկ. Վորոշիլովը —անփոփոխ անդամ է ՀամԿԿ(բ) ԿԿ, անդամ է ՌՍՖԽՀ կենտգործկոմի և ԽՍՀՄ կենտգործկոմի անդամ: Ընկ. Վորոշիլովը անդամ է ՀամԿԿ(բ) ԿԿ Քաղբյուրոյի:

Ընկ. Վորոշիլովն իր մեծ մարտական արժանիքների համար պարգևատրված է Կարմիր դրոշի չորս շքանշաններով և վոսկյա մարտական զենքով:

[redacted]

Պատմիր ընկ. Վորոշիլովի կենսագրությունը:





## ԽՍՀՄ ՀՌԽ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ ՅԵՎ ԲԳԿԲ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ՅԱՆ ԲՈՐԻՍՈՎԻՉ ԳԱՄԱՐՆԻԿ

Յան Բորիսովիչ Գամարնիկը ծնվել է 1894 թ.: ՀամԿ(բ)Կ անդամ է 1916 թ.: 1917 թվին, մինչև Հոկտեմբերին և Հոկտեմբերից հետո կուսակցության Կիևի կոմիտեի նախագահության անդամ էր և միաժամանակ նրա քարտուղարը: Կիևի Հոկտեմբերյան ապստամբության ղեկավարներից մեկն է եղել: Կիևում շարունակում է ղեկավար աշխատանքը մինչև գերմանական օկուպանտների կողմից քաղաքի գրավումը:

Վորպես Ուկրայինայի կենտգործկոմի նախագահության անդամ, իսկ հետագայում նաև վորպես Ռազմժողկոմի կոլեգիայի անդամ մասնակցել է Ուկրայինայի վրա հարձակվող գերմանական օկուպանտների դեմ կռվի ղեկավարմանը:

1918 թ. գարնանը Տագանրոգում բոլշևիկների ակտիվի կուսախորհրդակցությունում ընտրվում է Համաուկրաինական կուս- ՈւԿԿ(բ) կոնֆերանսի 1-ին գումարման և ստեղծման կազբյուրոյի մեջ, 1918 թ. գարնանը մտնում է Համաուկրաինական հեղափոխական կոմիտեի կազմի մեջ, որպես անդամության թեկնածու, որը փոխարինում էր Ուկրաինայի կենտգործկոմին և ժողկոմխորհին ղեկավարելու համար Ուկրաինայի բանվորների և գյուղացիների ամբողջ պարտիզանական կռիվը Գեռմանչչինայի և օկուպանտների դեմ: Գերմանչչինայի շրջանում մինչև Ուկրայինայում խորհրդային իշխանության հաստատվելն անդամ էր Օդեսայի, Ղրիմի և Խարկովի ընդհատակյա կուսկոմիտեների, համաուկրաինական ընդհատակյա կենտրոնի, այսպես կոչված «ինն» անդամներ:

Ուկրայինան գեռմանչչինայից ազատելուց հետո անդամ էր Խարկովի նահանգկոմի բյուրոյի, ՈւԿԿ (բ)ԿԿ անդամ, էր նախագահ էր կուսակցության Օդեսայի նահանգկոմի:

Ընկ. Գամարնիկն ակտիվ կերպով մասնակցել է Կարմիր բանակի շինարարությանն և մարտական գործողություններին:

Դենիկինի դեմ կռվի ժամանակ, նա 12-րդ բանակի հարավային խմբավորման Հեղռազմխորհրդի անդամ էր, որը առաջացրեց Օդեսայից մինչև Կիև հայտնի ճեղքվածք Դենիկինյան—պետլյուրական օղակում, որի համար պարգևատրված է Կարմիր դրոշի շքանշանով: Հետո յեղել է 58-րդ դիվիզիայի կոմիսար և մասնակցել է 1919 թ. Կիևի վրա կատարված արշավին, որը գրավված էր Դենիկինցիների կողմից, իսկ մի քանի ամսից հետո մասնակցել է Կիևը սպիտակներից ազատելիս:

1920 թ. ընկ. Գամարնիկը կուսակցական Օդեսայի նահանգկոմի նախագահ էր, կուսակցական Կիևի նահանգկոմի նախագահ յերեք տարվա ընթացքում, մինչև 1923 թ. Կիևչչինայի նահանգործկոմի նախագահ: Հետո տեղափոխվում են Հեռավոր արևելք, որտեղ նախագահ էր Հեռավոր արևելյան հեղկոմի, նախագահ



էր ծայրյերկրային գործկոմի և քարտուղար էր կուսակցության Հեռավոր արևելյան յերկրկոմի:

1930 թ. նա նշանակվում է ԽՍՀՄ ՀՌԽ նախագահի տեղակալ և ԲԳԿԲ Քաղաքական վարչության պետ:

Մինչև այդ նա Բելոռուսիայի կոմկուսակցության ԿԿ քարտուղար էր:

Գտնվելով կուսակցական և խորհրդային աշխատանքում, ընկ. Գամարնիկը միշտ կապված էր Կարմիր բանակի հետ մնալով Սիբիրի շրջանի Հեղռազմխորհրդի անդամ, իսկ հետո Բելոռուսիայի:

Կուսակցության 14-րդ համագումարին ընտրվել է ՀամԿԿ (բ) ԿԿ անդամության թեկնածու, իսկ 15 և 16-րդ-ին ՀամԿ(բ) ԿԿի անդամ:

[redacted]

Պատմիր ընկ. Գամարնիկի կենսագրությունը:

ՄԱՍ. ԳՐԱԴ-ՐԱՆ
Масс. Б-ка-Ч...
Гос. Публичная б-ка

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### II. ԽՍՀՄ-Ի ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

էջ


1. Ինչպես է կառուցված Կ. բանակը . . . . . . . . . 3
2. Կարմիր բանակի ազգային զորամասերը . . . . . . . 7
3. Հայկական Դիվիզիայի կազմակերպումը . . . . . . . . 9
4. Կարմիր բանակի համալրման սիստեմը . . . . . . . . 18
5. Աշխատավոր մասսաների ռազմական պատրաստությունը . 21


### ԻՆՉՊԵՍ Է ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ


6. ԽՍՀՄ զինված ուժերը . . . . . . . . . . . . . 24
7. Հետևազորը . . . . . . . . . . . . . . 27
8. Հեծելազորը . . . . . . . . . . . . . . 29
9. Հրետանի . . . . . . . . . . . . . . 30
10. Զրահապատ ուժեր . . . . . . . . . . . . 33
11. Ռդային նավատորմիղ . . . . . . . . . . . 37
12. Քիմիական ուժեր . . . . . . . . . . . . 40
13. Ճարտարագիտական զորքեր . . . . . . . . . . 42
14. Կապի զորքեր . . . . . . . . . . . . . 43
15. Կարմիր նավատորմ . . . . . . . . . . . 44


### ԻՆՉՊԵՍ Է ՂԵԿԱՎԱՐՎՈՒՄ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ


16. Ղեկավարության կենտրոնացումն ու կարգապահությունը . 47
17. Կարգապահության հիմունքները Կարմիր բանակում . . 48
18. Կարգապահական պրակտիկան Կարմիր բանակում . . . 50
19. Խրախուսանքներ և պարգևներ . . . . . . . . 52
20. Կարմիր բանակայինը պետք է կարգապահ մարտիկ լինի . 52
21. Փոխհարաբերությունը զինվորականների միջև . . . . 54
22. Հեղափոխական որինականության մարմինները բանակում . 56
23. Կարմիր բանակայինների իրավունքներն ու պարտա-
կանությունները . . . . . . . . . . . . 57
24. Կարմիր բանակայինի հանդիսավոր խոստումը . . . . 59


### ԲԳԿԲ ՊԵՏԵՐԻ ԿԱԶՄԸ


25. Հրամանատարներ . . . . . . . . . . . . 61
26. Հրամանատարների քաղաքական մասի ոգնականներ . . . 65
27. Վաշտի հրամանատարների քաղաքական մասի ոգնական-
ներ— քաղղեկները . . . . . . . . . . . 68
28. Հեղռազմական խորհուրդներ, շտաբներ, վարչություններ . 68
29. ԽՍՀ Միության Հեղ. Ռազմ. Խորհուրդ . . . . . . 69
30. Ռազմ. և ծով. գործերի ժող. կոմիսար և ԽՍՀՄ Հեղ.
Ռազմ. խորհրդի նախագահ Կ. Յե. Վորոշիլով . . 71
31. ԽՍՀՄ ՀՌԽ նախագահի տեղակալ և ԲԳԿԲ քաղաքա-
կան վարչության պետ Յ. Բ. Գամարնիկ . . . . 76

ՀՀ Ազգային գրադարան
NL0225183

42.340